ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 4-ի նիստի «2008 թվականի նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի), դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում: Դրամավարկային ցուցանիշները և ՀՀ միջազգային պահուստները հաշվարկված են հաշվեգրման սկզբունքով:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 թվականի նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 54

Իրական հատվածի ցուցանիշներ 59

Պետական բյուջեի ցուցանիշներ 62

Արտաքին հատվածի ցուցանիշներ 63

Դրամավարկային ցուցանիշներ 65

Ֆինանսական շուկա 77

Վարկային ներդրումներ 100

Առևտրային բանկերի ավանդներ 113

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 115

Վճարահաշվարկային համակարգ 119

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (04.11.2008)

2008 թվականի նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2008 թվականի նոյեմբերի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Վ. Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Ա. Նորեկյանը, Գ. Ղոնջեյանը և Վ. Աբրահամյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև նոյեմբերն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների և ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ

2008 թվականի հոկտեմբերին սեպտեմբերի համեմատությամբ արձանագրվել է 0.7% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը նվազել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 8.6%: Ընդ որում, պարենային ապրանքների գները հոկտեմբերին 12-ամսյա կտրվածքով աճել են 8.3%-ով, ոչ պարենային ապրանքների գները՝ 6.5%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 10.3%-ով:

Հոկտեմբերի գնաճը հիմնականում պայմանավորվել է «Միրգ և բանջարեղեն», «Կարտոֆիլ», ինչպես նաև «Մսամթերք» ապրանքախմբերի գների համապատասխանաբար 6.4% (նպաստումը գնաճին՝ 0.2 տոկոսային կետ), 11.7% (նպաստումը գնաճին՝ 0.6 տոկոսային կետ) և 1.1% (նպաստումը գնաճին՝ 0.1 տոկոսային կետ) աճով, որը որոշակիորեն զսպվել է բենզինի գների 6.1% (նպաստումը գնաճին՝ -0.2 տոկոսային կետ) և օդային տրանսպորտի ծառայությունների սակագների 7.0% (նպաստումը գնաճին՝ -0.1 տոկոսային կետ) նվազմամբ: Ընդ որում, «Հացամթերք» ապրանքախմբում գների էական նվազում, որը ենթադրվում էր գնաճի կանխատեսման բազիսային սցենարում[1], դեռևս չի արձանագրվել:

Բնականոն գնաճը հոկտեմբերին կազմել է 0.1%, որի պարագայում 12-ամսյա գնաճը, նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատ, նվազել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 6.21%:

Արտաքին միջավայր

2008 թվականի հոկտեմբերին ֆինանսական հաստատությունների կողմից վնասների բացահայտման, կառավարությունների միջամտման, կլանումների և միավորումների գործընթացը տարածվել է նաև ԱՄՆ-ի սահմաններից դուրս, ինչը ստիպել է ԱՄՆ-ի և եվրոպական երկրների կառավարություններին շարունակել օպերատիվ գործողությունները: ԱՄՆ-ն և բոլոր առաջատար եվրոպական երկրները բարձրացրել են երաշխավորված ավանդների գումարները և խոշորածավալ դրամական ներարկումներ իրականացրել, իսկ հոկտեմբերի ութին ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգը, Եվրոպական կենտրոնական բանկը և այլ եվրոպական առաջատար կենտրոնական բանկեր միաժամանակ իջեցրել են տոկոսադրույքը 0.5-ական տոկոսային կետով: Այս գործողությունները, սակայն, էական ազդեցություն չեն ունեցել, և ընդհանուր առմամբ

[1] *Տե՛ս «ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրը (2008 թ. չորրորդ եռամսյակ)»:*

բոլոր ֆինանսական շուկաները շարունակել են դրսևորել խիստ տատանողական վարքագիծ: Միաժամանակ, համաշխարհային տնտեսական հեռանկարները շարունակել են էապես վատթարանալ: Արժույթի միջազգային հիմնադրամը հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատությամբ էապես նվազեցրել է համաշխարհային տնտեսական աճի իր կանխատեսումների մակարդակը՝ 2009 թ. ակնկալելով 2.2 տոկոս (սեպտեմբերի կանխատեսումն էր 3.0 տոկոս), ընդ որում, զարգացած երկրներում կանխատեսվում է 0.3 տոկոս տնտեսական անկում (սեպտեմբերի կանխատեսումն էր 0.5 տոկոս աճ): Հատկանշական են նաև Ռուսաստանի տնտեսական աճի կանխատեսումները. իջեցվելով 2.0 տոկոսային կետով՝ սահմանվել է 3.5 տոկոս մակարդակ:

Իրացվելության սակավության և համաշխարհային տնտեսական աճի նվազման պայմաններում արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները հոկտեմբերին շարունակել են թուլանալ՝ հիմնականում գրանցելով ավելի ցածր մակարդակ, քան Կենտրոնական բանկի կանխատեսումներն էին: Նավթի միջազգային գները նվազել են ավելի քան 20 ԱՄՆ դոլարով՝ միջինում կազմելով մոտ 73 ԱՄՆ դոլար՝ Brent տեսակի հում նավթի բարելի դիմաց (նախորդ ամիս՝ 99.06), իսկ ամսվա վերջին իջել է մինչև 60 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց մակարդակին: Սա հիմնականում պայմանավորված է համաշխարհային տնտեսական աճի նվազման և նավթի ապագա պահանջարկի թուլացման սպասումներով:

Ե՛վ հումքային, և՛ ապրանքային շուկաներում գների նվազումը շարունակվել է նաև հոկտեմբերին: Ոսկու գները կազմել են միջինը 805 ԱՄՆ դոլար՝ տրոյական ունցիայի դիմաց (նախորդ ամիս՝ 829 ԱՄՆ դոլար)՝ ամսվա վերջին նվազելով մինչև 721 ԱՄՆ դոլար՝ տրոյական ունցիայի դիմաց: Արդյունաբերական մետաղների գներն աննախադեպ անկում են ապրել, մասնավորապես՝ Լոնդոնի մետաղների բորսայում հոկտեմբերին պղնձի գները հասել են մինչև 4000 ԱՄՆ դոլար տոննայի դիմաց՝ գրանցելով գների 29.6 տոկոս նվազում նախորդ ամսվա համեմատությամբ, իսկ տ/տ նվազումը կազմել է 39 տոկոս:

Շարունակվել են նվազել նաև պարենային ապրանքների գները: Չիկագոյի ապրանքահումքային բորսայում հացահատիկի գները նվազել են ևս մոտ 1.6 ԱՄՆ դոլարով՝ կազմելով միջինը 6.5 ԱՄՆ դոլար բուշելի դիմաց՝ պայմանավորված 2008/2009 մարքեթինգային տարվա աննախադեպ բարձր բերքի ակնկալիքներով, ինչպես նաև համաշխարհային պահանջարկի էական նվազմամբ: Բրնձի գինը նույնպես նվազել է մոտ 3 ԱՄՆ դոլարով ամերիկյան ցենտների դիմաց (45.3 կգ)՝ կազմելով մոտ 16.4 ԱՄՆ դոլար:

Ինչ վերաբերում է մյուս ապրանքներին, մասնավորապես՝ շաքարավազին և կարագին, ապա շաքարավազի գինը նախորդ ամսվա համեմատությամբ նվազել է 12 տոկոսով, իսկ կարագի գինն աճել մոտ 6 տոկոսով:

Ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի փոխարժեքը շարունակել է արժևորվել նաև հոկտեմբերին. 1.4 ԱՄՆ դոլար եվրոյի դիմաց փոխարժեքից հասնելով մինչև 1.25՝ հիմնականում պայմանավորված եվրոգոտու տնտեսական սպասումների շարունակվող վատթարացմամբ: Տնտեսական անկման և ապագա գնաճային ճնշումների էական թուլացման արդյունքում Ֆեդերալ պահուստային համակարգը ևս մեկ անգամ իջեցրել է տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 1 տոկոս: Նոյեմբերի սկզբին եվրոպական կենտրոնական բանկերը նույնպես շարունակել են տոկոսադրույքների նվազեցումը՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական աճի հետագա թուլացման կանխատեսումներով: Կարելի է փաստել Անգլիայի բանկի կողմից տոկոսադրույքների աննախադեպ նվազեցումը՝ 4.5 տոկոսից մինչև 3 տոկոս:

Համաշխարհային տնտեսական աճի հեռանկարների վատթարացումը հումքային ապրանքների պահանջարկի թուլացման սպասումների միջոցով արդեն ձևավորել է զգալի գնանկումային ներուժ, որի ազդեցությունը Հայաստանի տնտեսությունում գների ճշգրտման ուղղությամբ դեռևս ունի դանդաղ ընթացք:

Համախառն առաջարկ[2]

2008 թվականի երրորդ եռամսյակում պահպանվել են տնտեսական աճի բարձր տեմպերը՝ կազմելով 10.7%: Արդյունքում, տնտեսական աճը հունվար-սեպտեմբերին պահպանվել է առաջին կիսամյակի մակարդակի շուրջ՝ կազմելով 10.4%:

[2] *Ներկայացված աճի ցուցանիշները երրորդ եռամսյակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:*

Արդյունաբերության ճյուղում ավելացված արժեքի աճը 2008 թ. երրորդ եռամսյակում կազմել է 10.6%, ինչը պայմանավորվել է հիմնականում ***սննդի արդյունաբերությունում*** արտադրության ծավալների աճի տեմպի արագացմամբ, որն արձանագրվել է երկրորդ եռամսյակում մրգի և բանջարեղենի հարուստ բերքի ստացման և մշակման արդյունքում: Մասնավորապես, ավելացել է մրգի և բանջարեղենի պահածոների (հունվար-սեպտեմբերին՝ համապատասխանաբար 160.3% և 40.7%), բնական հյութերի (26%), կոնյակի (22.4%), էթիլային սպիրտի (70%), ոչ ալկոհոլային խմիչքների (26.7%), հանքային ջրերի (20.5%) և շաքարավազի (22.3%) արտադրությունը:

Աճի բարձր տեմպերի պահպանում է արձանագրվել ***էներգետիկայի*** (հունվար-սեպտեմբերին՝ 11.7%) և ***շինանյութերի արտադրության*** (16.2%) ենթաճյուղերում: Մյուս կողմից՝ ***քիմիական արդյունաբերությունում*** և ***մետաղագործությունում*** թողարկման ծավալների կրճատումը շարունակվել է՝ կապված պղնձի և կաուչուկի արտադրության ծավալների համապատասխանաբար 9.7% և 16% նվազման հետ:

Շինարարությունում շարունակել է աճի բարձր տեմպը, որը 2008 թվականի երրորդ եռամսյակում կազմել է 17.3%: Ինչպես և նախորդ եռամսյակում, երրորդ եռամսյակում ևս այն պայմանավորվել է բնակարանային շինարարության (հունվար-սեպտեմբերին՝ 45% աճ), մշակող արդյունաբերության (55%) ճյուղերում, ֆինանսական, առևտրի և նորոգման, հյուրանոցների և ռեստորանների ծառայությունների ոլորտներում (համապատասխանաբար 98.7%, 23.1% և 150%) կապիտալ ներդրումների ավելացմամբ:

Ծառայությունների ոլորտում երրորդ եռամսյակում պահպանվել են աճի բարձր տեմպերը, որի պարագայում ճյուղի ավելացված արժեքի աճը կազմել է 10.6%: Այն արձանագրվել է ինչպես առևտրի (հունվար-սեպտեմբերին՝ 10.1% աճ), այնպես էլ կապի (11.3%), տրանսպորտի (6.2%) և ֆինանսական գործունեության (37.1%) ծառայությունների գծով:

Գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը կազմել է 3.1%՝ երկրորդ եռամսյակի 12.8% աճի փոխարեն: Գյուղատնտեսության աճի տեմպի նվազումը պայմանավորված է նախորդ տարվա երրորդ եռամսյակում ստացված աննախադեպ բարձր բերքով (մասնավորապես՝ խաղողի, վարունգի և լոլիկի), ինչի արդյունքում, 2007 թվականի երրորդ եռամսյակի համեմատությամբ, գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը կազմել է 12.6%:

Ամփոփենք՝ 2008 թվականի երրորդ եռամսյակի տնտեսության ճյուղային զարգացումները վկայում են տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանման մասին, թեև ռիսկերի դրսևորման հավանականությունը պահպանվում է:

Աշխատանքի շուկա[3]

2008 թվականի երրորդ եռամսյակում տնտեսության աշխատավարձերի աճը, զուգակցվելով աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի նվազման հետ, շարունակել է որոշակի գնաճային ճնշումներ առաջացնել: Մասնավորապես՝ աշխատավարձի աճը գնաճը խթանել է 0.72 տոկոսային կետով, իսկ արտադրողականության աճը այն մեղմել է 0.16 տոկոսային կետով: Արդյունքում, աշխատանքի շուկայի զուտ ազդեցությունը 12-ամսյա գնաճի վրա կազմել է 0.56 տոկոսային կետ:

Համախառն պահանջարկ

Մասնավոր հատվածի ծախսումների[4] իրական աճը կազմել է 10.7%, ընդ որում, մասնավոր ներդրումներն ավելացել են 14.4%-ով, իսկ մասնավոր սպառումը՝ 9.3%-ով: Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ երրորդ եռամսյակում մասնավոր հատվածի ծախսումները գնաճի վրա գրեթե զրոյական ազդեցություն են ունեցել: Մասնավոր իրական ծախսումների գնահատված մակարդակը գերազանցել է իր հավասարակշիռ մակարդակը 0.08%-ով, ինչի արդյունքում մասնավոր ծախսումների նպաստումը գնաճին կազմել է ընդամենը 0.02 տոկոսային կետ:

---

[3] Աշխատավարձի աճի երրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված հուլիսի փաստացի, օգոստոս և սեպտեմբեր ամիսների գնահատված ցուցանիշների վրա: Գործազրկության մակարդակի և արտադրողականության միջին եռամսյակային ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված հուլիս, օգոստոս ամիսների փաստացի և սեպտեմբեր ամսվա գնահատված ցուցանիշների վրա:

[4] Մասնավոր հատվածի սպառման և ներդրումների երրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը երկրորդ եռամսյակի դրությամբ են:

2008 թ. երրորդ եռամսյակում արձանագրվել է ***ապրանքների և ծառայությունների արտահանման*** տ/տ 4.8% աճ: Ընդ որում, ապրանքների արտահանումն ավելացել է ընդամենը տ/տ 1.4%-ով: Փաստացի ցուցանիշը մի փոքր շեղվել է վերջին գնահատումներից (ապրանքների և ծառայությունների անփոփոխ մակարդակ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ): Արտահանման աճին հիմնականում նպաստել է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման աճը: Միաժամանակ, մետաղագործական արդյունաբերության վերականգնման հետաձգմամբ է պայմանավորվել երկաթամիահալվածքի, պղնձի արտահանման իրական ծավալների նվազումը: Անմշակ ոսկու ու ոսկերչական իրերի արտահանման նվազումը շարունակվել է ընթացիկ եռամսյակում: Ապրանքների և ծառայությունների արտահանման անվանական ցածր աճի պայմաններում արձանագրվել է իրական ծավալների տ/տ 4% նվազում:

Ներմուծման աճի բարձր տեմպերը պահպանվել են ընթացիկ եռամսյակում ևս՝ չնայած օգոստոսի տարածաշրջանային իրադարձություններին, երբ ներմուծումը նախորդ ամսվա համեմատությամբ նվազել էր 30.3%-ով: Երրորդ եռամսյակում ապրանքների[5] և ծառայությունների տ/տ աճը կազմել է 42.1%, ինչը բարձր է վերջին գնահատումներից: Ներմուծման բարձր աճը հիմնականում պահպանվել է մարդատար ավտոմեքենաների, նավթամթերքի, անմշակ ոսկու, հեռախոսային և հեռագրային ապարատների, մոդեմների ներմուծման ծավալների՝ տարեսկզբից արձանագրվող բարձր աճի հաշվին: Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների աճը կազմել է տ/տ 24.2%:

Շարունակվող համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում երրորդ եռամսյակում արձանագրվել է ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի տ/տ 43.9% աճ, ինչը 3.3 տոկոսային կետով բարձր է նախորդ գնահատումից: Ընդ որում, ներհոսքի տ/տ աճը կազմել է 33.8%՝ արտահոսքի տ/տ 13.3% նվազման պարագայում:

2008 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ պետական հատվածի նախնական ամփոփ ցուցանիշների համաձայն[6], հարկաբյուջետային ազդակը[7] կազմել է 0.8 տոկոս ընդլայնող՝ գնահատված 0.2 տոկոս ընդլայնողի փոխարեն: Նշված շեղումը պայմանավորված էր հիմնականում դեֆլյատորի բարձր մակարդակի արդյունքում ձևավորված ՀՆԱ անվանական մակարդակի կանխատեսվածի համեմատությամբ զգալի գերազանցմամբ:

Ամփոփենք. ներքին տնտեսության հատվածում, հարկաբյուջետային հատվածի կողմից գնահատվածի նկատմամբ փոքր-ինչ ավելի ընդլայող ազդակի և մասնավոր սպառման չեզոք ազդեցության դրսևորման պարագայում, ընդհանուր առմամբ, եռամսյակի համար կանխատեսված գնահատումները մնացել են նույնը՝ գնաճի վրա ներքին պահանջարկի կողմից չեզոք ազդեցություն:

Փող և վարկ

2008 թվականի երրորդ եռամսյակի դրամավարկային ցուցանիշների[8] 12-ամսյա փաստացի միտումներն էապես չեն տարբերվել նախորդ եռամսյակների միտումներից: Շարունակվել է դրանց աճի տեմպերի դանդաղում՝ հիմնականում պայմանավորված դրամավարկային պայմանների խստացմամբ և տնտեսության դրամայնացման գործընթացի դանդաղմամբ: Դա արտահայտվել է հետևյալ զարգացումներով. դրամային զանգվածն աճել է 35.4%-ով, շրջանառությունում եղած կանխիկը՝ 28.4%-ով, իսկ դրամային ավանդները՝ 45.1%-ով: Տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերը պահպանվել են, և երրորդ եռամսյակում վարկավորման 12-ամսյա աճը կազմել է 65.6%:

Հոկտեմբերին շարունակվել է դրամային զանգվածի աճի տեմպերի դանդաղումը՝ կազմելով 27.3%: Վերջինիս կառուցվածքում արձանագրվել են ինչպես դրամային

---

[5] Ապրանքների ներմուծման (ՍԻՖ) ծավալների աճը հունվար-սեպտեմբերին կազմել է 43.0%, իսկ առանց ադամանդի՝ 46.0%: Ծառայությունների ներմուծման ցուցանիշները ԿԲ գնահատումներն են:

[6] ՀՀ պետական հատվածի երրորդ եռամսյակի նախնական փաստացի ցուցանիշների հաշվարկման հիմքում ընկած են ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած երրորդ եռամսյակի ՀՀ պետական բյուջեի նախնական փաստացի ցուցանիշները և համայնքների բյուջեների ու արտաբյուջետային միջոցների հոսքերի վերաբերյալ ԿԲ գնահատումները:

[7] Հարկաբյուջետային ազդակների հաշվարկման հիմքում ընկած համախմբված բյուջեի եռամսյակային գնահատված ցուցանիշները համախմբված բյուջեի նախորդ տարիների սեզոնային միտումների և փորձագիտական գնահատումների հիման վրա գնահատված եռամսյակային համամասնություններն են:

[8] Ներկայացված են ավանդային կազմակերպությունների դրամավարկային ցուցանիշները, որոնք ներառում են ՀՀ բանկային համակարգի և վարկային կազմակերպությունների տվյալները:

ավանդների (34.4%), այնպես էլ շրջանառությունում գտնվող կանխիկ դրամի (22.3%) համեմատաբար ցածր աճի տեմպեր: Թեև որոշ չափով դանդաղմանը, դեռևս բարձր են մնում տնտեսության վարկավորման աճի տեմպերը՝ ամսվա վերջի դրությամբ կազմելով տ/տ 62.8%:

Արձանագրեցին.

Հոկտեմբերին ներքին և արտաքին միջավայրի զարգացումները հիմնականում համահունչ էին չորրորդ եռամսյակում ակնկալվող ուղղություններին: Արտաքին միջավայրի գնաճային ճնշումները շարունակել են թուլանալ, ինչն արտահայտվել է պարենային ապրանքների և նավթի միջազգային գների հետագա նվազմամբ: Ինչպես սպասվում էր՝ դրան նպաստել է համաշխարհային ֆինանսական շուկաների ներկա զարգացումների հետևանքով համաշխարհային պահանջարկի անկումը: Միաժամանակ, վառելիքի և պարենային որոշ ապրանքների ներքին շուկաներում գների էական նվազում դեռևս չի արձանագրվել, թեև որոշակի դրական միտումներ սկսել են նկատվել: Շարունակվող ֆինանսական ճգնաժամի պայմաններում, սակայն, չափազանց բարձր է միջազգային ապրանքային շուկաներում գների հետագա տատանողականության հավանականությունը: Վերջինիս, ինչպես նաև միջազգային ֆինանսական ճգնաժամի տևականության և դրա հետևանքների հաղթահարման ժամկետների անորոշության, ինչպես նաև ներքին շուկայում գնային ճշգրտումների դանդաղ ընթացքի պայմաններում, խորհրդում գերակշռում էր տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման միտումը: Վերոնշյալ փաստարկները բավարար նախապայմաններ չեն ստեղծում դրամավարկային պայմանների թուլացման համար: Միաժամանակ, ընթացիկ տնտեսական զարգացումները ներկա տոկոսադրույքների պայմաններում առավել շահեկան են կապիտալի ներհոսքի համար:

Որոշեցին.

2008 թվականի նոյեմբերի 4-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7.75%: Լոմբարդային վարկերի և ավանդների տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար 10.75% և 4.75%:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***«Բլիզկո», «Բիստրայա պոչտա» և «Միգոմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Գլոբփեյմենթս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը (որոշում թիվ 280Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Օջախ-Ե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն փոխանակման կետին (որոշում թիվ 282Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Ռենեսա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 283Ա):
- ***«Վիզա», «Մանի Գրամ» և «Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** համապատասխանաբար «Արդշինինվեստբանկ», «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական, «Դեպի տուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 287Ա, 292Ա, 290Ա):
- ***Ոչ կյանքի վերաապահովագրության դասով վերաապահովագրության լիցենզիա է տրամադրվել*** «Ինգո Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 288Ա):
- ***Գրանցվել է*** «Արմենիան փոստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 1/984Ա):
- ***Գրանցվել է*** «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Ստեփանակերտ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/1006Ա):
- ***Գրանցվել է*** «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Ստեփանակերտ» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/1007Ա):
- ***Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառվել են*** «Ընդմիջում» սահմանափակ պատասխանատվությամբ և «Կասկադ-Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունները (որոշումներ թիվ 1/1015Ա, 1/1026Ա):
- «Կասկադ-Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը ***թույլատրվել է իրականացնել ապահովագրական գործակալի գործունեություն*** (որոշում թիվ 1/1021Ա):
- ***Գրանցվել են*** «Մալաթիա ունիվերսալ վարկային կազմակերպություն» և «Պրոմեթեյ բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համապատասխանաբար «Սասուն» և «Ազատության 12», ինչպես նաև «Կասկադ բանկ» և «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Երվանդ Քոչար» և «Արմավիր» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/1025Ա, 1/1039Ա, 1/1068Ա, 1/1073Ա):
- Հայաստանի Հանրապետության արժութային օրենսդրության պահանջները խախտելու համար 2 արտարժույթի փոխանակման կետերի, 1 գրավատան և 1 փակ բաժնետիրական ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ ապագայում նման խախտումներ թույլ չտալու հանձնարարականով և 1 արտարժույթի փոխանակման կետի ***նշանակվել է տուգանք***՝ 50000 ՀՀ դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/1000Ա, 1/ 1055Ա, 1/1001Ա, 1/1057Ա, 1/1002Ա):
- Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը 2008 թ. հոկտեմբերի 7-ին սահմանվել է ***տարեկան 12 տոկոս*** (որոշում թիվ 279-Ն):

*Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման կարգը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման կարգը»՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի ապրիլի 30-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 սեպտեմբերի 2008 թ., N 261-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշման

ԿԱՐԳ
ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) ամրագրված՝ բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման կարգն ու պայմանները:

1.2. Սույն կարգում օգտագործվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

2.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված նրանց մասնաճյուղերի), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը (այսուհետ՝ բանկ) ձևավորում են ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կտա ստեղծել ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր ավանդատուների (այսուհետ՝ ավանդատու) վերաբերյալ տվյալների բազա:

2.2. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգը ծրագրային ապահովվածություն ունեցող տեղեկատվական համակարգ է, որը հնարավորություն է տալիս իրականացնել ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում, առկա տեղեկատվության փոփոխում և ցանկացած պահի դրությամբ ավանդների ու ավանդատուների վերաբերյալ տեղեկատվության արտահանում:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. օգոստոսի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.10.08 թ. (ՀՀԳՏ N36 (310), 22.10.08):

2.3. Բանկերն ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգը վարում և տվյալները պահպանում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 250-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի մարտի 16-ի թիվ 40 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 71-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին» (այսուհետ՝ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ») համապատասխան:

2.4. Ի լրումն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների»՝ բանկը պարտավոր է.

ա) ավանդների և ավանդատուների վերաբերյալ ծածկագրված տվյալների բազան պահպանել երկու տարբեր համակարգիչներում, ընդ որում, դրանցից մեկը պետք է լինի ռեզերվային սերվեր,

բ) յուրաքանչյուր աշխատանքային օր իրականացնել ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայի պահուստային կրկնօրինակում և յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ ավանդների և ավանդատուների վերաբերյալ ամբողջական տվյալների բազայի ծածկագրված կրկնօրինակը պահպանել արտաքին կրիչների վրա և ապահովել վերջիններիս պաշտպանվածությունը հրդեհներից ու այլ աղետներից, ինչպես նաև անձեռնմխելիությունը չարտոնված առնչություններից,

գ) սահմանել ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազային մուտք ունենալու իրավասություններ ունեցող համապատասխան աշխատակիցների ցանկը՝ հաստատված գործադիր մարմնի կողմից, ինչպես նաև այդ իրավասությունների բովանդակությունը,

դ) ապահովել սույն կետի ա) - գ) ենթակետերում նշված բոլոր գործողությունների համապատասխան փաստաթղթավորումը:

2.5. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայում բանկը արտացոլում է բանկի գլխամասի և բոլոր մասնաճյուղերի ավանդատուների վերաբերյալ միասնական տեղեկատվություն: Բանկը պատասխանատու է ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազայում ներառված տեղեկությունների ճշտության համար:

2.6. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալների բազան ձևավորելու նպատակով բանկը ավանդատուի համար բանկային հաշվի բացման, ավանդային պայմանագրի կնքման կամ ավանդատուի հանդեպ այլ պարտավորությունների ծագման ժամանակ ստանում է ավանդատուի և ավանդատուի անձը հաստատող փաստաթղթի տեսակի և ռեկվիզիտների վերաբերյալ սույն կարգի աղյուսակ 1-ով սահմանված տեղեկատվությունը: Իսկ գործող ավանդների համար բանկը հնարավորության դեպքում թարմացնում է սույն կարգի աղյուսակ 1-ով պահանջվող տեղեկատվությունը:

2.7. Բանկը պարտավոր է Կենտրոնական բանկի առաջին իսկ պահանջով մինչև պահանջը ստանալու հաջորդ աշխատանքային օրվա ժամը 18^{00}-ն ներկայացնել ավանդների և ավանդատուների վերաբերյալ ամբողջական տվյալների բազան՝ պահանջը ստանալու նախորդ աշխատանքային օրվա վերջի դրությամբ:

2.8. Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տվյալները Կենտրոնական բանկ են ներկայացվում արտաքին կրիչներով՝ ուղեկցող նամակով և «Բանկային գաղտնիք» մակագրությամբ՝ ապահովելով տեղեկատվության գաղտնիությունը, անվտանգությունը և հուսալիությունը:

2.9. Տվյալները Կենտրոնական բանկ են ներկայացվում XML ֆորմատով: Այլ կերպ ներկայացված տեղեկատվությունը համարվում է չընդունված: XML ֆայլերը արխիվացվում են «rar» արխիվատորով: XML ֆայլերի ծածկագրման միջոց է «Արաքս-ԿԲ» համալիրը: XML-ի սխեմաները բանկերին տրամադրվում են Կենտրոնական բանկի կողմից:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Բանկերի կողմից ստեղծվող և վարվող ավանդների ու ավանդատուների վերաբերյալ տվյալների բազան ներառում է սույն կարգի աղյուսակ 1-ով սահմանված տեղեկությունները:

Աղյուսակ 1.

1. Հաշվետու բանկ

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Բանկի կոդը	Լրացվում է բանկի հնգանիշ կոդը	պարտադիր
Ամսաթիվ	Լրացվում է հաշվետու օրվա ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	պարտադիր

2. Ավանդատուի տվյալներ

2.1. Ավանդատու[1]

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Ավանդատուի նույնացուցիչ	Լրացվում է ավանդատուի ունիկալ նույնացուցիչը (որը կարող է լինել նաև ավանդատուի հերթական համարը ավանդատուների ցուցակում)	պարտադիր
Ազգանուն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
Անուն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
Հայրանուն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	օժանդակ[2]
Ծննդյան ամսաթիվ	Լրացվում է ավանդատուի ծննդյան օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999)	օժանդակ
Սեռ	Լրացվում է ավանդատուի սեռը	պարտադիր
Քաղաքացիություն	Լրացվում է ավանդատուի քաղաքացիությունը (ՀՀ քաղաքացի, փախստական, քաղաքացիություն չունեցող անձ, օտարերկրյա քաղաքացի)	օժանդակ
ՀՎՀՀ	Լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող ավանդատուների հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար չի լրացվում	օժանդակ
Սոցիալական ապահովության քարտ	Լրացվում է ավանդատուի սոցիալական ապահովության քարտի համարը, որը ենթակա է պարտադիր լրացման նոր բացվող բոլոր բանկային հաշիվների համար	օժանդակ

2.2. Անձը հաստատող փաստաթուղթ

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Տեսակը	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, որը ընդգրկված է ՀՀ Կառավարության 1999 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում անձը (ինքնություն) հաստատող փաստաթղթերի ցանկում[3]	օժանդակ
Համարը	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթղթի համարը (սերիան), բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքի իրականացման ժամանակ հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթը չի պահանջվում	պարտադիր
Տրման ամսաթիվը	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթղթի տրման ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ
Ում կողմից	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթուղթը տվող մարմնի կոդը կամ անվանումը	օժանդակ
Վավերականության ժամկետ	Լրացվում է ավանդատուի անձը հաստատող համապատասխան փաստաթղթի վավերականության ժամկետը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ

2.3. Հաշվառման հասցե

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Երկիր	Լրացվում է ավանդատուի հաշվառման (գրանցման) երկրի լատինատառ կոդը[3]	օժանդակ
Համայնք	Լրացվում է ավանդատուի հաշվառման (գրանցման) համայնքի կոդը[3] (եթե հաշվառման վայրը ՀՀ սահմաններից դուրս է, չի լրացվում)	օժանդակ
Հասցե	Լրացվում է ավանդատուի հաշվառման (գրանցման) հասցեն (մասնավորապես փողոց/թաղամաս, շենք/տուն, բնակարան)	օժանդակ

2.4. Հետադարձ կապի հասցե, հեռախոսահամար

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Երկիր	Լրացվում է ավանդատուի բնակության վայրի երկրի լատինատառ կոդը[3]	օժանդակ
Համայնք	Լրացվում է ավանդատուի բնակության վայրի համայնքի կոդը[3] (եթե բնակության վայրը ՀՀ սահմաններից դուրս է, չի լրացվում)	օժանդակ
Հասցե	Լրացվում է ավանդատուի բնակության հասցեն (փողոց/թաղամաս, շենք/տուն, բնակարան)	օժանդակ
Հեռախոս	Լրացվում է (են) ավանդատուի հեռախոսահամարը (ները)	օժանդակ
e-mail	Լրացվում է (են) ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեն(երը)	օժանդակ

3. Բանկի նկատմամբ ավանդատուի պահանջներ[4]

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Բանկի մասնաճյուղի կոդը	Լրացվում է բանկի այն մասնաճյուղի հնգանիշ կոդը, որի նկատմամբ ձևավորվել է ավանդատուի՝ Օրենքի իմաստով ավանդ համարվող պահանջը (այսուհետ՝ պահանջ)	պարտադիր
Փաստաթղթի համար	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր պահանջը հավաստող փաստաթղթի համարը	օժանդակ
Փաստաթղթի ամսաթիվ	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր պահանջը հավաստող փաստաթղթի (պահանջի ծագման) ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ
Հաշվեհամար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի համար բանկի կողմից տրված հաշվեհամարը	պարտադիր
Տեսակ	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի անվանումը (ցպահանջ կամ ժամկետային ավանդ, ընթացիկ, հաշվարկային, խնայողական հաշիվ, անվանական պարտատոմս և այլ պահանջներ, որոնք համապատասխանում են Օրենքում տրված բանկային ավանդի սահմանմանը)[3]	պարտադիր
Ավանդի կարգավիճակը	Եթե ավանդը երաշխավորված է, ապա լրացվում է «ER», եթե երաշխավորված չէ, ապա լրացվում է «NER»	պարտադիր
Չերաշխավորված ավանդի պատճառը	Եթե ավանդը երաշխավորված է, ապա չի լրացվում, եթե երաշխավորված չէ, ապա լրացվում է պատճառը (ըստ Օրենքի հոդված 2-ի 3-րդ մասի սահմանման)	օժանդակ
Արժույթ	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի արժույթի ISO կոդը[3]	պարտադիր
Ավանդատուի մասնաբաժինը	Լրացվում է համատեղ ավանդների դեպքում՝ արտահայտելով տվյալ ավանդատուի մասնաբաժինը (տոկոսային արտահայտությամբ) ավանդի ընդհանուր գումարում	օժանդակ
Սկզբնական գումար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի սկզբնական (մայր) գումարը՝ առանց դրա վրա հավելագրված տոկոսների (ավանդի մայր գումար, պարտատոմսի գնման գին և այլն): Համատեղ ավանդի դեպքում լրացվում է ավանդի ընդհանուր գումարը, այլ ոչ թե տվյալ ավանդատուի մասնաբաժինը	պարտադիր
Տոկոսադրույք	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույքը	պարտադիր
Տոկոսագումար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի նկատմամբ հաշվետու օրվա դրությամբ հավելագրված և չվճարված տոկոսագումարը	պարտադիր
Մնացորդ	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի մնացորդը հաշվետու օրվա դրությամբ	պարտադիր

4. Բանկի նկատմամբ ավանդատուի պարտավորություններ[5]

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Բանկի մասնաճյուղի կոդը	Լրացվում է բանկի այն մասնաճյուղի հնգանիշ կոդը, որի նկատմամբ ձևավորվել է ավանդատուի պարտավորությունը	օժանդակ
Փաստաթղթի համար	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորությունը հավաստող փաստաթղթի համարը	օժանդակ
Փաստաթղթի ամսաթիվ	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորությունը հավաստող փաստաթղթի ամսաթիվը (օրը (01-ից մինչև 31), ամիսը (01-ից մինչև 12) և տարին (1900-ից մինչև 9999))	օժանդակ
Հաշվեհամար	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության համար բանկի կողմից տրված հաշվեհամարը	օժանդակ
Տեսակ	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության անվանումը (վարկ, բանկային հաշվի վարկավորում, այլ փոխառություններ, ֆակտորինգային, լիզինգային գործառնություններ, բանկի նկատմամբ ցանկացած հիմքով ծագած այլ պարտավորություններ)[3]	օժանդակ
Արժույթ	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության արժույթի ISO կոդը[3]	օժանդակ
Սկզբնական գումար	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության մայր գումարը՝ առանց դրա վրա հավելագրված տոկոսների	օժանդակ
Տոկոսադրույք	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույքը	օժանդակ
Տոկոսագումար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության նկատմամբ հաշվետու օրվա դրությամբ հավելագրված և չվճարված տոկոսագումարը	օժանդակ
Տույժ և տուգանք	Լրացվում է բանկի հանդեպ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության նկատմամբ հաշվարկված տույժերի և տուգանքների մեծությունների հանրագումարը դրամական արտահայտությամբ	օժանդակ
Մնացորդ	Լրացվում է բանկի նկատմամբ ավանդատուի յուրաքանչյուր պարտավորության մնացորդը հաշվետու օրվա դրությամբ	օժանդակ

5. Երաշխավորված ավանդ

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Ավանդատուին հատուցման ենթակա գումարի չափը	Լրացվում է տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդի չափը ՀՀ դրամով՝ հաշվարկված ըստ սույն կարգի հավելված 2-ի: Չի լրացվում այն ավանդների համար, որոնք երաշխավորված ավանդ չեն համարվում	օժանդակ

6. Ամփոփ

Դաշտի անվանումը	Նկարագրությունը	Բնութագիրը
Ավանդատուների քանակ	Լրացվում է բանկի ավանդատուների ընդհանուր թիվը	պարտադիր
Ավանդների քանակ	Լրացվում է բանկի կողմից ներգրավված ավանդների ընդհանուր թիվը	պարտադիր
Ավանդների ընդհանուր գումարը, այդ թվում՝	Լրացվում է բանկի կողմից ներգրավված դրամային ավանդների և արտարժութային ավանդների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ	պարտադիր
դրամային ավանդներ	Լրացվում է բանկի կողմից ներգրավված դրամային ավանդների հանրագումարը	պարտադիր
արտարժութային ավանդներ	Լրացվում է բանկի կողմից ներգրավված արտարժութային ավանդների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ	պարտադիր
Երաշխավորված ավանդների չափը	Լրացվում է բանկի բոլոր երաշխավորված ավանդների ընդհանուր գումարը	պարտադիր

[1] Հօգուտ երրորդ անձի ներդրված ավանդների դեպքում նշվում են ավանդը ներդնողի տվյալները՝ մինչև երրորդ անձի՝ ավանդը տնօրինելու իրավունքն ուժի մեջ մտնելու պահը, այնուհետև, որպես ավանդատու հանդես է գալիս երրորդ անձը, և ավանդատուի վերաբերյալ տեղեկատվության մեջ նշվում են վերջինիս տվյալները:

[2] Աղյուսակ 1-ում օժանդակ լրացման համար նախատեսված դաշտերը ենթակա են պարտադիր լրացման համապատասխան տվյալները բանկին հասանելի լինելու դեպքում:

[3] Բանկերը աղյուսակ 1-ում ներառված արժույթների ISO կոդերը, երկրների կոդերը, Հայաստանի Հանրապետության համայնքների կոդերը և անձը հաստատող փաստաթղթի տեսակները, բանկի նկատմամբ ավանդատուի պահանջները և պարտավորությունները լրացնում են ըստ սույն կարգի հավելված 1-ով ներկայացված տեղեկագրերի:

[4] Եթե միևնույն ավանդատուն տվյալ բանկի նկատմամբ ունի մեկից ավելի պահանջներ, ապա աղյուսակ 1-ի 3-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը լրացվում է յուրաքանչյուր պահանջի համար:

[5] Եթե միևնույն ավանդատուն տվյալ բանկի նկատմամբ ունի մեկից ավելի պարտավորություններ, ապա աղյուսակ 1-ի 4-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը լրացվում է յուրաքանչյուր պարտավորության համար:

3.2. Եթե ավանդային պայմանագրով նախատեսված է, որ տվյալ ավանդը բացի ավանդատուից տնօրինելու իրավունք ունի (ունեն) նաև այլ անձ (անձինք), ապա նրա (նրանց) համար ևս լրացվում են սույն կարգի աղյուսակ 1-ի 2-րդ մասով պահանջվող տվյալները:

Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման վերաբերյալ կարգի հավելված 1

Անձը հաստատող փաստաթղթի տեսակը

Փաստաթղթի կոդը	Անձը հաստատող փաստաթղթի անվանումը
AND	Անձնագիր
ZIG	Զինվորական գրքույկ
NGN	ՀՀ ներքին գործերի նախարարության մարմինների կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ
CVK	Ծննդյան վկայական (մինչև 16 տարեկան անձանց համար)
PVK	Փախստականի վկայական
PCP	Փախստականի ճամփորդական փաստաթուղթ
OTA	Օտարերկրյա պետության անձնագիր
AHP	Անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթուղթ
HHA	Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր
KVK	Կացության վկայական

Արժույթների ISO կոդերը

ISO-ի կոդը	ԱՐՏԱՐԺՈՒՅԹ
AMD	Հայկական դրամ
USD	ԱՄՆ դոլար
EUR	ԵՎՐՈ
RUB	Ռուսաստանյան ռուբլի
GBP	Անգլիական ֆունտ ստեռլինգ
AUD	Ավստրալիական դոլար
ARP	Արգենտինական պեսո
DKK	Դանիական կրոն
EGP	Եգիպտական ֆունտ
TLY	Թուրքական լիրա
IRR	Իրանական ռիալ
ILS	Իսրայելական շեքել
PLZ	Լեհական զլոտի
LBP	Լիբանանյան ֆունտ
CAD	Կանադական դոլար
INR	Հնդկական ռուփի
HUF	Հունգարական ֆորինտ
JPY	Ճապոնական իեն
NOK	Նորվեգական կրոն
SEK	Շվեդական կրոն
CHF	Շվեյցարական ֆրանկ
CZK	Չեխական կրոնա
CNY	Չինական յուան
SGD	Սինգապուրյան դոլար
SKK	Սլովակյան կրոնա
KRW	Հարավկորեական վոն
BRC	Բրազիլական ռեալ
MXN	Մեքսիկական պեսո
SAR	Սաուդյան Արաբական ռիալ
SYP	Սիրիական ֆունտ
AED	ՄԱէ դիրհամ
KWD	Քուվեյթյան դինար
BGL	Բուլղարական լեվ
RON	Ռումինական լեյ
ISK	Իսլանդական կրոն
EEK	էստոնական կրոն
LVL	Լատվիական լատ
LTL	Լիտվական լիտ
KGS	Ղրղզական սոմ
KZT	Ղազախական տենգե
MDL	Մոլդովական լեյ
UAH	Ուկրաինական գրիվնյա
UZS	Ուզբեկական սում
BYR	Բելառուսական ռուբլի
TJS	Տաջիկական սոմոնի
TMM	Թուրքմենական մանաթ
GEL	Վրացական լարի
HKD	Հոնգկոնգի դոլար
OTH	Այլ

Պահանջի տեսակը

Կոդը	Պահանջը
JDE	Ժամկետային ավանդ
CPA	Ցպահանջ ավանդ
ANA	Անչափահասի անունով ներդրված ավանդ
HAH	Հաշվարկային հաշիվ
YHA	Ընթացիկ հաշիվ

JHA	Ժամկետային հաշիվ
XHA	Խնայողական հաշիվ
THA	Տարանցիկ հաշիվ
AHA	Այլ հաշիվ
AVC	Ավանդային սերտիֆիկատներ
ATA	Առանց տոկոսի անվանական արժեթղթեր
TAA	Տոկոսային անվանական արժեթղթեր
AAA	Այլ անվանական (ոչ բաժնեմասային) արժեթղթեր
DPP	Դրամական փոխանցումների դիմաց պարտավորություններ
CMP	Ժամկետը լրացած, բայց չմարված ներգրավված միջոցների դիմաց պարտավորություններ
PXR	Փոխառություններ
KRP	Կրեդիտորական պարտք
APA	Ավանդատուի հանդեպ այլ պարտավորություններ

Պարտավորության տեսակը

Կոդը	Պարտավորությունը
SPV	Սպառողական վարկ
BIV	Բիզնես վարկ
AVV	Ավտոմեքենայի վարկ
HPV	Հիփոթեքային վարկ
LBV	Լոմբարդային (ոսկու գրավադրմամբ) վարկ
USV	Ուսման վարկ
AVK	Այլ վարկ
PXT	Փոխառություն
DEP	Դեբիտորական պարտք
LIZ	Լիզինգ
FAC	Ֆակտորինգ
APA	Ավանդատուի նկատմամբ այլ պահանջներ

Պետությունների կոդերը

Պետության կոդը	Պետության անվանումը
NVL	Տվյալը բացակայում է
ALB	Ալբանիա
DZA	Ալժիր
USA	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
AGO	Անգոլա
AUS	Ավստրալիա
AUT	Ավստրիա
ARE	Արաբական Միացյալ Ամիրայություններ
ARG	Արգենտինա
AFG	Աֆղանստան
BRA	Բրազիլիա
BLR	Բելառուս
BEL	Բելգիայի Թագավորություն
BRG	Բուլղարիա
BIH	Բոսնիա և Հերցեգովինա
GHA	Գանա
DEU	Գերմանիա
DNK	Դանիա
EGY	Եգիպտոս
ZMB	Զամբիա
EST	Էստոնիա
THA	Թաիլանդ
TKM	Թուրքմենստան
TUR	Թուրքիա
IDN	Ինդոնեզիա
IRL	Իռլանդիա

ISL	Իսլանդիա
ESP	Իսպանիա
ISR	Իսրայել
ITA	Իտալիա
IRN	Իրան
IRQ	Իրաք
LVA	Լատվիա
POL	Լեհաստան
LBR	Լիբիա
LBN	Լիբանան
LTU	Լիտվա
HRV	Խորվաթիա
KHM	Կամբոջա
CAN	Կանադա
QAT	Կատար
CYP	Կիպրոս
PRK	Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն
KOR	Կորեայի Հանրապետություն
CUB	Կուբա
ARM	Հայաստանի Հանրապետություն
IND	Հնդկաստան
JOR	Հորդանան
HUN	Հունգարիա
GRC	Հունաստան
KAZ	Ղազախստան
KGZ	Ղրղզստան
JPN	Ճապոնիա
MYS	Մալայզիա
MAR	Մարոկկո
MEX	Մեքսիկա
MDA	Մոլդովա
NPL	Նեպալ
NGA	Նիգերիա
NLD	Նիդերլանդներ
NOR	Նորվեգիա
SWE	Շվեդիա
CHE	Շվեյցարիա
LKA	Շրի Լանկա
CZE	Չեխիա
CHN	Չինաստան
ROU	Ռումինիա
RUS	Ռուսաստան
PRT	Պորտուգալիա
SRB	Սերբիա
SYR	Սիրիա
SVK	Սլովակիա
SVN	Սլովենիա
SGP	Սինգապուր
VEN	Վենեսուելա
GEO	Վրաստան
UKR	Ուկրաինա
UZB	Ուզբեկստան
URY	Ուրուգվայ
KWT	Քուվեյթ
PHL	Ֆիլիպիններ
FIN	Ֆինլանդիա
FRA	Ֆրանսիա
NKR	ԼՂՀ
OTH	Այլ

ՀՀ համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
NOVL	Տվյալը բացակայում է

Արագածոտն մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
AG01	Աշտարակ
AG02	Ապարան
AG03	Թալին
AG04	Ագարակ (Աշտարակի շրջան)
AG05	Ագարակավան
AG06	Ալագյազ
AG07	Ակունք
AG08	Աղձք
AG09	Սադունց
AG10	Անտառուտ
AG11	Աշնակ
AG12	Ավան
AG13	Մեծածոր
AG14	Ավշեն
AG15	Արագած (Ապարանի շրջան)
AG16	Արագածավան
AG17	Արագածոտն
AG18	Արա
AG19	Թաթուլ
AG20	Արտաշատավան
AG21	Արտենի
AG22	Արուճ
AG23	Ափնագյուղ
AG24	Բազմաղբյուր
AG25	Օթևան
AG26	Արևուտ
AG27	Բերքառատ
AG28	Բյուրական
AG29	Գառնահովիտ
AG30	Գեղադիր
AG31	Գեղածոր
AG32	Գեղարոտ
AG33	Գետափ
AG34	Կանչ
AG35	Դաշտադեմ
AG36	Դավթաշեն
AG37	Ճարճակիս
AG38	Դիան
AG39	Դպրեվանք
AG40	Եղիպատրուշ
AG41	Եղնիկ
AG42	Երնջատափ
AG43	Ջարինջա
AG44	Ջովասար
AG45	Թթուջուր
AG46	Թլիկ
AG47	Իրինդ
AG48	Լեռնապար
AG49	Լեռնարոտ
AG50	Լուսագյուղ
AG51	Լուսակն
AG52	Ծաղկահովիտ
AG53	Ծաղկաշեն
AG54	Ծաղկասար

AG55	Օիլքար
AG56	Կաթնաղբյուր
AG57	Կարբի
AG58	Կարմրաշեն
AG59	Կաքավաձոր
AG60	Կոշ
AG61	Հակո
AG62	Հարթավան
AG63	Հացաշեն
AG64	Հնաբերդ
AG65	Ջորագլուխ
AG66	Դդմասար
AG67	Ղազարավան
AG68	Մաստարա
AG69	Մելիքգյուղ
AG70	Միջնատուն
AG71	Միրաք
AG72	Կայք
AG73	Ներքին Բազմաբերդ
AG74	Ներքին Սասունաշեն
AG75	Նիգավան
AG76	Նոր Ամանոս
AG77	Շողակն
AG78	Նորաշեն (Արագածի շրջան)
AG79	Նոր Արթիկ
AG80	Նոր Եդեսիա
AG81	Շամիրամ
AG82	Շենավան
AG83	Շենկանի
AG84	Շղարշիկ
AG85	Ոսկեթաս
AG86	Ոսկեհատ
AG87	Ոսկեվազ
AG88	Չքնաղ
AG89	Պարտիզակ
AG90	Ջամշլու
AG91	Ջրամբար
AG92	Ռյա թազա
AG93	Սաղմոսավան
AG94	Կանիաշիր
AG95	Սասունիկ
AG96	Սարալանջ
AG97	Սիփան
AG98	Սորիկ
AG99	Սուսեր
AG100	Վարդաբյուր
AG101	Վարդենիս
AG102	Վարդենուտ
AG103	Վերին Բազմաբերդ
AG104	Վերին Սասնաշեն
AG105	Վերին Սասունիկ
AG106	Տեղեր
AG107	Ցամաքասար
AG108	Ուշի
AG109	Ուջան
AG110	Փարպի
AG111	Քուչակ
AG112	Օհանավան
AG113	Օշական
AG114	Օրգով
AG115	Այլ

Արարատ մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
AR01	Արտաշատ
AR02	Արարատ
AR03	Մասիս
AR04	Վեդի
AR05	Աբովյան
AR06	Ազատաշեն
AR07	Ազատավան
AR08	Այգավան
AR09	Այգեզարդ
AR10	Այգեպատ
AR11	Այգեստան
AR12	Այնթապ
AR13	Ավշար
AR14	Արալեզ
AR15	Արարատ
AR16	Արաքսավան
AR17	Արբաթ
AR18	Արգավանդ
AR19	Արմաշ
AR20	Արևաբույր
AR21	Արևշատ
AR22	Բաղրամյան
AR23	Բարձրաշեն
AR24	Բերդիկ
AR25	Բերքանուշ
AR26	Բյուրավան
AR27	Բուրաստան
AR28	Գեղանիստ
AR29	Գետազատ
AR30	Գետափնյա
AR31	Գոռավան
AR32	Դալար
AR33	Դաշտավան
AR34	Դաշտաքար
AR35	Դարակերտ
AR36	Դարբնիկ
AR37	Դեղձուտ
AR38	Դիմիտրով
AR39	Դիտակ
AR40	Դվին
AR41	Եղեգնավան
AR42	Երասխ
AR43	Զանգակատուն
AR44	Զորակ
AR45	Լանջազատ
AR46	Լանջանիստ
AR47	Լանջառ
AR48	Լուսաշող
AR49	Լուսառատ
AR50	Խաչփառ
AR51	Կանաչուտ
AR52	Հայանիստ
AR53	Հնաբերդ
AR54	Հովտաշատ
AR55	Հովտաշեն
AR56	Ղուկասավան
AR57	Մասիս
AR58	Մարմարաշեն

AR59	Մխչյան
AR60	Մրգանուշ
AR61	Մրգավան
AR62	Մրգավետ
AR63	Նարեկ
AR64	Նիզամի
AR65	Նշավան
AR66	Նոյակերտ
AR67	Նորաբաց
AR68	Նորամարգ
AR69	Նորաշեն
AR70	Նոր Խարբերդ
AR71	Նոր կյանք
AR72	Նոր Կյուրին
AR73	Նոր ուղի
AR74	Շահումյան
AR75	Շաղափ
AR76	Ոսկետափ
AR77	Ոստան
AR78	Պարույր Սևակ
AR79	Ջրահովիտ
AR80	Ջրաշեն
AR81	Ռանչպար
AR82	Սայաթ-Նովա
AR83	Սիս
AR84	Սիսավան
AR85	Սիփանիկ
AR86	Սուրենավան
AR87	Վանաշեն
AR88	Վարդաշատ
AR89	Վարդաշեն
AR90	Գինեվետ
AR91	Վերին Արտաշատ
AR92	Վերին Դվին
AR93	Տափերական
AR94	Ուրցալանջ
AR95	Ուրցաձոր
AR96	Փոքր Վեդի
AR97	Քաղցրաշեն
AR98	Այլ

Արմավիր մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
AM01	Արմավիր (Հոկտեմբերյան)
AM02	Վաղարշապատ (Էջմիածին)
AM03	Մեծամոր
AM04	Ակնալիճ
AM05	Ակնաշեն
AM06	Աղավնատուն
AM07	Ամասիա
AM08	Ամբերդ
AM09	Այգեկ
AM10	Այգեշատ (Արմավիրի շրջան)
AM11	Այգեշատ (Էջմիածնի շրջան)
AM12	Ապագա
AM13	Առատաշեն
AM14	Արագած
AM15	Արագափ
AM16	Արաքս (Արմավիրի շրջան)
AM17	Արաքս (Էջմիածնի շրջան)

AM18	Արգավանդ
AM19	Արգինա
AM20	Արմավիր
AM21	Արշալույս
AM22	Արտամետ
AM23	Արտիմետ
AM24	Արտաշար
AM25	Արևադաշտ
AM26	Արևաշատ
AM27	Արևիկ
AM28	Բագարան
AM29	Բաղրամյան (Բաղրամյանի շրջան)
AM30	Բաղրամյան (Էջմիածնի շրջան)
AM31	Բամբակաշատ
AM32	Բերքաշատ
AM33	Գայ
AM34	Գետաշեն
AM35	Գրիբոյեդով
AM36	Դալարիկ
AM37	Դաշտ
AM38	Դողս
AM39	Եղեգնուտ
AM40	Երասխահուն
AM41	Երվանդաշատ
AM42	Զարթոնք
AM43	Մայիսյան
AM44	Լենուղի
AM45	Լեռնագոգ
AM46	Լեռնամերձ
AM47	Լուկաշիհ
AM48	Լուսագյուղ
AM49	Խանջյան
AM50	Խորոնք
AM51	Ծաղկալանջ
AM52	Ծաղկունք
AM53	Ծիածան
AM54	Կողբավան
AM55	Հայթաղ
AM56	Հայկաշեն
AM57	Հայկավան
AM58	Հացիկ
AM59	Սարդարապատ
AM60	Հովտամեջ
AM61	Հուշակերտ
AM62	Այգեվան
AM63	Մարգարա
AM64	Մեծամոր
AM65	Մերձավան
AM66	Մյասնիկյան
AM67	Մրգաշատ
AM68	Մրգաստան
AM69	Մուսալեռ
AM70	Նալբանդյան
AM71	Նոր Արմավիր
AM72	Նոր Արտագես
AM73	Նոր Կեսարիա
AM74	Նորակերտ
AM75	Նորապատ
AM76	Նորավան
AM77	Շահումյան
AM78	Շահումյանի թռչնաֆաբրիկա

AM79	Շենավան
AM80	Շենիկ
AM81	Ոսկեհատ
AM82	Պտղունք
AM83	Ջանֆիդա
AM84	Ջրաշեն
AM85	Ջրառատ
AM86	Ջրարբի
AM87	Գեղակերտ
AM88	Ալաշկերտ
AM89	Վանանդ
AM90	Վարդանաշեն
AM91	Տալվորիկ
AM92	Տանձուտ
AM93	Տարոնիկ
AM94	Փարաքար
AM95	Փշատավան
AM96	Քարակերտ
AM97	Ֆերիկ
AM98	Այլ

Գեղարքունիք մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
GE01	Գավառ (Կամո)
GE02	Ճամբարակ
GE03	Մարտունի
GE04	Սևան
GE05	Վարդենիս
GE06	Ազատ
GE07	Ախպրաձոր
GE08	Ակունք
GE09	Աղբերք
GE10	Այգուտ
GE11	Այրք
GE12	Անտառամեջ
GE13	Աստղաձոր
GE14	Ավազան
GE15	Արեգունի
GE16	Արծվանիստ
GE17	Արծվաշեն
GE18	Արտանիշ
GE19	Արփունք
GE20	Բերդկունք
GE21	Գանձակ
GE22	Գեղամաբակ
GE23	Գեղամասար
GE24	Գեղամավան
GE25	Գեղարքունիք
GE26	Գեղաքար
GE27	Գեղահովիտ
GE28	Գետիկ
GE29	Դարանակ
GE30	Դդմաշեն
GE31	Դպրաբակ
GE32	Դրախտիկ
GE33	Երանոս
GE34	Զոլաքար
GE35	Զովաբեր
GE36	Ծովասար

GE37	Թթուջուր
GE38	Լանջաղբյուր
GE39	Լիճք
GE40	Լճաշեն
GE41	Լճավան
GE42	Լճափ
GE43	Լուսակունք
GE44	Խաչաղբյուր
GE45	Ծակքար
GE46	Ծաղկաշեն
GE47	Ծաղկունք
GE48	Ծափաքաղ
GE49	Ծովագյուղ
GE50	Ծովազարդ
GE51	Ծովակ
GE52	Ծովինար
GE53	Կալավան
GE54	Կախակն
GE55	Կարճաղբյուր
GE56	Կարմիրգյուղ
GE57	Կութ
GE58	Կուտական
GE59	Հայրավանք
GE60	Ձորագյուղ
GE61	Ձորավանք
GE62	Մադինա
GE63	Մարտունի
GE64	Մաքենիս
GE65	Մեծ Մասրիկ
GE66	Ներքին Գետաշեն
GE67	Ներքին Շորժա
GE68	Նորաբակ
GE69	Նորակերտ
GE70	Նորաշեն
GE71	Նորատուս
GE72	Շատջրեք
GE73	Շատվան
GE74	Շորժա
GE75	Չկալովկա
GE76	Ջաղացածոր
GE77	Ջիլ
GE78	Սարուխան
GE79	Սեմյոնովկա
GE80	Սոթք
GE81	Վահան
GE82	Վաղաշեն
GE83	Վանևան
GE84	Վարդաձոր
GE85	Վարդենիկ
GE86	Վարսեր
GE87	Վերին Գետաշեն
GE88	Վերին Շորժա
GE89	Տորֆավան
GE90	Տրետուք
GE91	Փամբակ
GE92	Փոքր Մասրիկ
GE93	Այլ

Լոռի մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
LR01	Վանաձոր
LR02	Ալավերդի
LR03	Ախթալա
LR04	Թումանյան
LR05	Շամլուղ
LR06	Սպիտակ
LR07	Ստեփանավան
LR08	Տաշիր
LR09	Ագարակ
LR10	Ազնվաձոր
LR11	Աքան
LR12	Ահնիձոր
LR13	Ամրակից
LR14	Այգեհատ
LR15	Անտառամուտ
LR16	Ապավեն
LR17	Արդվի
LR18	Արծնի
LR19	Արջուտ
LR20	Արևածագ
LR21	Արևաշող
LR22	Աքորի
LR23	Բազում
LR24	Բլագոդարնոյե
LR25	Բովաձոր
LR26	Անտառաշեն
LR27	Գարգառ
LR28	Գեղասար
LR29	Գյուլագարակ
LR30	Գոգարան
LR31	Գուգարք
LR32	Դաշտադեմ
LR33	Դարպաս
LR34	Դեբետ
LR35	Դսեղ
LR36	Եղեգնուտ
LR37	Թեղուտ
LR38	Լեջան
LR39	Լեռնահովիտ
LR40	Լեռնանցք
LR41	Լեռնապատ
LR42	Լեռնավան
LR43	Լերմոնտով
LR44	Լոռի Բերդ
LR45	Լորուտ
LR46	Լուսաղբյուր
LR47	Խնկոյան
LR48	Ծաթեր
LR49	Ծաղկաբեր
LR50	Ծաղկաշատ
LR51	Կաթնաղբյուր
LR52	Կաթնաջուր
LR53	Կաթնառատ
LR54	Կաճաճկուտ
LR55	Կարմիր Աղեկ

LR56	Կողես
LR57	Կուրթան
LR58	Հագվի
LR59	Հալավար
LR60	Հաղպատ
LR61	Հարթագյուղ
LR62	Հոբարձ
LR63	Հովնանաձոր
LR64	Ջյունաշող
LR65	Ջորագետ
LR66	Ջորագյուղ
LR67	Ջորամուտ
LR68	Ղուրսալ
LR69	Ճոճկան
LR70	Մարգահովիտ
LR71	Մարց
LR72	Մեդովկա
LR73	Մեծ Այրում
LR74	Մեծավան
LR75	Մեծ Պառնի
LR76	Մեղվահովիտ
LR77	Միխայելովկա
LR78	Մղարթ
LR79	Յաղդան
LR80	Նեղոց
LR81	Նովոսելցովո
LR82	Նորաշեն
LR83	Նոր Խաչակապ
LR84	Շահումյան
LR85	Շամուտ
LR86	Շենավան
LR87	Շիրակամուտ
LR88	Շնող
LR89	Չկալով
LR90	Պաղաղբյուր
LR91	Պետրովկա
LR92	Պրիվոլնոյե
LR93	Պուշկինո
LR94	Ջիլիզա
LR95	Ջրաշեն
LR96	Սարալանջ
LR97	Սարահարթ
LR98	Սարամեջ
LR99	Սարատովկա
LR100	Սարչապետ
LR101	Սվերդլով
LR102	Վահագնաձոր
LR103	Վահագնի
LR104	Վարդաբլուր
LR105	Ուռուտ
LR106	Ուրասար
LR107	Փամբակ
LR108	Քարաբերդ
LR109	Քարաձոր
LR110	Քարինջ
LR111	Քարկոփ
LR112	Օձուն
LR113	Ֆիոլետովո
LR114	Այլ

Կոտայք մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
KT01	Հրազդան
KT02	Աբովյան
KT03	Բյուրեղավան
KT04	Եղվարդ
KT05	Ծաղկաձոր
KT06	Նոր Հաճն
KT07	Չարենցավան
KT08	Ալափարս
KT09	Ակունք
KT10	Աղավնաձոր
KT11	Առինջ
KT12	Արագյուղ
KT13	Արամուս
KT14	Արգել
KT15	Արզական
KT16	Արզնի
KT17	Արտավազ
KT18	Բալահովիտ
KT19	Բջնի
KT20	Բուժական
KT21	Գառնի
KT22	Գեղադիր
KT23	Գեղաշեն
KT24	Գեղարդ
KT25	Գետամեջ
KT26	Գողթ
KT27	Ձառ
KT28	Ձովաշեն
KT29	Ձովունի
KT30	Ձովք
KT31	Ձորավան
KT32	Թեղենիք
KT33	Լեռնանիստ
KT34	Կաթնաղբյուր
KT35	Կամարիս
KT36	Կապուտան
KT37	Կարենիս
KT38	Կոտայք
KT39	Հանքավան
KT40	Հատիս
KT41	Հացավան
KT42	Ձորաղբյուր
KT43	Մայակովսկի
KT44	Մարմարիկ
KT45	Մեղրաձոր
KT46	Մրգաշեն
KT47	Նոր Արտամետ
KT48	Նոր Գեղի
KT49	Նոր գյուղ
KT50	Նոր Երզնկա
KT51	Նուռնուս
KT52	Ողջաբերդ
KT53	Պռոշյան
KT54	Պտղնի
KT55	Ջրաբեր
KT56	Ջրառատ
KT57	Ջրվեժ
KT58	Գետարգել

KT59	Սարալանջ
KT60	Սոլակ
KT61	Մաբերդ
KT62	Վերին Պտղնի
KT63	Քաղսի
KT64	Քանաքեռավան
KT65	Քասախ
KT66	Քարաշամբ
KT67	Ֆանտան
KT68	Այլ

Շիրակ մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
SH01	Գյումրի
SH02	Արթիկ
SH03	Մարալիկ
SH04	Ազատան
SH05	Ալվար
SH06	Ախուրիկ
SH07	Ախուրյան
SH08	Աղին
SH09	Աղվորիկ
SH10	Ամասիա
SH11	Այգեբաց
SH12	Անիավան
SH13	Անիպեմզա
SH14	Անուշավան
SH15	Աշոցք
SH16	Առափի
SH17	Արդենիս
SH18	Արեգնադեմ
SH19	Արփենի
SH20	Արևիկ
SH21	Արևշատ
SH22	Նորշեն
SH23	Բայանդուր
SH24	Բանդիվան
SH25	Բաշգյուղ
SH26	Բավրա
SH27	Բենիամին
SH28	Բերդաշեն
SH29	Գառնառիճ
SH30	Գեղանիստ
SH31	Գետափ
SH32	Գետք
SH33	Բյուրակն
SH34	Գոգհովիտ
SH35	Գտաշեն
SH36	Գուսանագյուղ
SH37	Երազգավորս
SH38	Ջարիշատ
SH39	Ջորակերտ
SH40	Ջուլգաղբյուր
SH41	Թավշուտ
SH42	Թորոսգյուղ
SH43	Իսահակյան
SH44	Լանջիկ
SH45	Լեռնագյուղ
SH46	Լեռնակերտ
SH47	Լեռնուտ

SH48	Լուսակերտ
SH49	Լուսաղբյուր
SH50	Ծաղկուտ
SH51	Կամո
SH52	Կապս
SH53	Կառնուտ
SH54	Կարմրավան
SH55	Կարմրաքար
SH56	Կաքավասար
SH57	Կրաշեն
SH58	Կրասար
SH59	Հայկածոր
SH60	Հայկասար
SH61	Հայկավան
SH62	Հայրենյաց
SH63	Հառիճ
SH64	Հարթաշեն
SH65	Հացիկ
SH66	Հողմիկ
SH67	Հոռոմ
SH68	Հովիտ
SH69	Հովտաշեն
SH70	Հովտուն
SH71	Հովունի
SH72	Ջիթհանքով
SH73	Ջորակապ
SH74	Ջորաշեն
SH75	Ղազանչի
SH76	Ղարիբջանյան
SH77	Մայիսյան
SH78	Մարմաշեն
SH79	Մեծ Մանթաշ
SH80	Մեծ Սարիար
SH81	Մեծ Սեպասար
SH82	Մեղրաշատ
SH83	Մեղրաշեն
SH84	Բասեն
SH85	Մուսայելյան (Աշոցքի շրջան)
SH86	Նահապետավան
SH87	Նոր Կյանք
SH88	Շաղիկ
SH89	Շիրակ
SH90	Շիրակավան
SH91	Ողջի
SH92	Ոսկեհասկ
SH93	Պեմզաշեն
SH94	Ջաջուռ
SH95	Ջաջուռավան
SH96	Ջրաձոր
SH97	Ջրառատ
SH98	Ջրափի
SH99	Սալուտ
SH100	Սառնաղբյուր
SH101	Սարագյուղ
SH102	Սարալանջ
SH103	Սարակապ
SH104	Սարապատ
SH105	Սարատակ
SH106	Սիզավետ
SH107	Սպանդարյան

SH108	Վահրամաբերդ
SH109	Վարդաղբյուր
SH110	Վարդաքար
SH111	Տուֆաշեն
SH112	Ցողամարգ
SH113	Փանիկ
SH114	Փոքրաշեն
SH115	Փոքր Մանթաշ
SH116	Փոքր Սարիար
SH117	Փոքր Սեպասար
SH118	Քարաբերդ
SH119	Քեթի
SH120	Այլ

Սյունիք մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
SY01	Կապան
SY02	Ագարակ
SY03	Գորիս
SY04	Դաստակերտ
SY05	Մեղրի
SY06	Սիսիան
SY07	Քաջարան
SY08	Ագարակ
SY09	Ալվանք
SY10	Ախլաթյան
SY11	Աղիտու
SY12	Աղվանի
SY13	Անգեղակոթ
SY14	Անտառաշատ
SY15	Աշոտավան
SY16	Առաջածոր
SY17	Արավուս
SY18	Արծվանիկ
SY19	Արևիս
SY20	Բալաք
SY21	Բարձրավան
SY22	Բնունիս
SY23	Բռնակոթ
SY24	Ակներ
SY25	Գեղանուշ
SY26	Գեղի
SY27	Գետաթաղ
SY28	Գորայք
SY29	Գուդեմնիս
SY30	Դավիթ Բեկ
SY31	Դարբաս
SY32	Տավրուս
SY33	Եղեգ
SY34	Եղվարդ
SY35	Թանահատ
SY36	Թասիկ
SY37	Լեհվազ
SY38	Լեռնածոր
SY39	Լիճք
SY40	Լծեն
SY41	Լոր
SY42	Ածանան
SY43	Խդրանց
SY44	Խնածախ

SY45	Խնձորեսկ
SY46	Խոզնավար
SY47	Խոտ
SY48	Ծավ
SY49	Ծղուկ
SY50	Կաղնուտ
SY51	Կարճևան
SY52	Կոռնիծոր
SY53	Կուրիս
SY54	Հալիծոր
SY55	Հարթաշեն
SY56	Հարժիս
SY57	Հացավան
SY58	Ձորաստան
SY59	Իշխանասար
SY60	Ճակատեն
SY61	Մուցք
SY62	Ներքին Խնձորեսկ
SY63	Ներքին Խոտանան
SY64	Ներքին Հանդ
SY65	Նռնածոր
SY66	Նորաշենիկ
SY67	Նորավան
SY68	Շաղատ
SY69	Շաքի
SY70	Շենաթաղ
SY71	Շիկահող
SY72	Շինուհայր
SY73	Շվանիծոր
SY74	Շրվենանց
SY75	Շուռնուխ
SY76	Որոտան (Գորիսի շրջան)
SY77	Որոտան (Սիսիանի շրջան)
SY78	Չափնի
SY79	Սալվարդ
SY80	Սառնակունք
SY81	Սյունիք
SY82	Նժդեհ
SY83	Սպանդարյան
SY84	Սվարանց
SY85	Սրաշեն
SY86	Սևաքար
SY87	Վահրավար
SY88	Վաղատին
SY89	Վաղատուր
SY90	Վանեք
SY91	Վարդանիծոր
SY92	Վարդավանք
SY93	Վերին Խոտանան
SY94	Վերիշեն
SY95	Տաթև
SY96	Տանձավեր
SY97	Տանձատափ
SY98	Տաշտուն
SY99	Տեղ
SY100	Տոլորս
SY101	Տորունիք

SY102	Ուժանիս
SY103	Ույծ
SY104	Նոր Աստղաբերդ
SY105	Քաշունի
SY106	Քաջարան
SY107	Քարահունջ
SY108	Քարաշեն
SY109	Օխտար
SY110	Այլ

Վայոց ձոր մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
VD01	Եղեգնաձոր
VD02	Ջերմուկ
VD03	Վայք
VD04	Ագարակաձոր
VD05	Ազատեկ
VD06	Աղավնաձոր
VD07	Աղնջաձոր
VD08	Արենի
VD09	Արին
VD10	Արտաբույնք
VD11	Արտավան
VD12	Արփի
VD13	Բարձրունի
VD14	Գետափ
VD15	Գլաձոր
VD16	Գնդեվազ
VD17	Գնիշիկ
VD18	Գողթանիկ
VD19	Գոմք
VD20	Ելփին
VD21	Եղեգիս
VD22	Ջաուիթափ
VD23	Ջեղեա
VD24	Թառաթումբ
VD25	Խաչիկ
VD26	Խնձորուտ
VD27	Կարմրաշեն
VD28	Հերհեր
VD29	Հերմոն
VD30	Հորբատեղ
VD31	Հորս
VD32	Մալիշկա
VD33	Մարտիրոս
VD34	Նոր Ազնաբերդ
VD35	Շատին
VD36	Չիվա
VD37	Ռինդ
VD38	Սալլի
VD39	Սարավան
VD40	Սերս
VD41	Վարդահովիտ
VD42	Վերնաշեն
VD43	Փոռ
VD44	Քարագլուխ
VD45	Այլ

Տավուշ մարզի համայնքների կոդերը

Համայնքի կոդը	Համայնքի անվանումը
TV01	Իջևան
TV02	Այրում
TV03	Բերդ
TV04	Դիլիջան
TV05	Նոյեմբերյան
TV06	Ազատամուտ
TV07	Ակնաղբյուր
TV08	Աղավնավանք
TV09	Աճարկուտ
TV10	Այգեհովիտ
TV11	Այգեձոր
TV12	Այգեպար
TV13	Աչաջուր
TV14	Արծվաբերդ
TV15	Արճիս
TV16	Բագրատաշեն
TV17	Բաղանիս
TV18	Բարեկամավան
TV19	Բերդավան
TV20	Բերքաբեր
TV21	Գանձաքար
TV22	Գետահովիտ
TV23	Գոշ
TV24	Դեբեդավան
TV25	Դեղձավան
TV26	Դիտավան
TV27	Դովեղ
TV28	Ենոքավան
TV29	Թեղուտ
TV30	Տավուշ
TV31	Իծաքար
TV32	Լճկածոր
TV33	Լուսահովիտ
TV34	Լուսաձոր
TV35	Խաշքառակ
TV36	Խաչարձան
TV37	Ծաղկավան (Իջևանի շրջան)
TV38	Ծաղկավան (Տաուշի շրջան)
TV39	Կիրանց
TV40	Կոթի
TV41	Կողբ
TV42	Հաղարծին
TV43	Հաղթանակ
TV44	Հովք
TV45	Մոսեսգեղ
TV46	Նավուր
TV47	Ներքին Կարմիր աղբյուր
TV48	Նորաշեն
TV49	Ոսկեպար
TV50	Ոսկեվան
TV51	Չինարի
TV52	Չինչին
TV53	Չորթան
TV54	Պառավաքար
TV55	Պտղավան
TV56	Ջուջևան
TV57	Սարիգյուղ

TV58	Սևքար
TV59	Վազաշեն
TV60	Վարագավան
TV61	Վերին Կարմիր աղբյուր
TV62	Զորական
TV63	Այլ

Երևան քաղաքի թաղային համայնքների կոդերը

Թաղային համայնքի կոդը	Թաղային համայնքի անվանումը
YR01	Աջափնյակ
YR02	Ավան
YR03	Արաբկիր
YR04	Դավթաշեն
YR05	Էրեբունի
YR06	Կենտրոն
YR07	Մալաթիա - Սեբաստիա
YR08	Նոր Նորք
YR09	Նորք - Մարաշ
YR10	Նուբարաշեն
YR11	Շենգավիթ
YR12	Քանաքեռ - Զեյթուն

Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման վերաբերյալ կարգի հավելված 2

Երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկը

1. Արտարժութային պահանջները և պարտավորությունները փոխարկվում են դրամային արտահայտությամբ՝ հիմք ընդունելով հաշվետու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը:

2. Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Ընդ որում.

1) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային ավանդ, ապա երաշխավորված ավանդը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է երկու միլիոն դրամից, ապա երաշխավորված ավանդի հաշվարկի մեջ ընդգրկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ երկու միլիոն դրամի և առաջին հերթին հաշվարկված գումարի տարբերությունը չգերազանցող չափով:

2) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային ավանդ, ապա երաշխավորված ավանդը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է 1 միլիոն դրամից, ապա երաշխավորված ավանդի հաշվարկի մեջ ընդգրկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ մեկ միլիոն դրամի և առաջին հերթին հաշվարկված գումարի տարբերությունը չգերազանցող չափով:

3) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային ավանդներ, ապա երաշխավորված ավանդը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է երաշխավորված ավանդի դրամային մասը՝ սույն կետի 1) ենթակետի համաձայն: Եթե ստացված գումարը մեծ կամ հավասար է մեկ միլիոն դրամին, ապա արտարժութային ավանդը չի մասնակցում երաշխավորված ավանդի հաշվարկմանը: Եթե ստացված գումարը փոքր է մեկ միլիոն դրամից, ապա հաշվարկվում է նաև երաշխավորված ավանդի արտարժութային մասը, ընդ որում, առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է մեկ միլիոնից, ապա հաշվարկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ մեկ միլիոնի և հաշվարկված երաշխավորված ավանդի տարբերությունը չգերազանցող չափով:

3. Եթե ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ ունի պարտավորություն, ապա երաշխավորված ավանդը հաշվարկվում է ավանդատուի ավանդի և բանկի նկատմամբ ունեցած պարտավորության դրական տարբերության հիման վրա:

4. Եթե ավանդատուն բանկում ունի և՛ դրամային, և՛ արտարժութային ավանդ և միևնույն ժամանակ բանկի նկատմամբ ունի դրամային և արտարժութային պարտավորություն, ապա դրանց տարբերությունները հաշվարկվում են հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է դրամային ավանդի և դրամային պարտավորության տարբերությունը,

2) հաշվարկվում է արտարժութային ավանդի և արտարժութային պարտավորության տարբերությունը,

3) սույն կետի 1) և 2) ենթակետերի հաշվարկների դրական արդյունքների դեպքում երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 3) ենթակետի համաձայն,

4) սույն կետի 1) և 2) ենթակետերի հաշվարկներից մեկի բացասական արդյունքի դեպքում հաշվարկվում է վերը նշված երկու տարբերությունների հանրագումարը,

5) ստացված արդյունքը դրական լինելու դեպքում հաշվարկվում է երաշխավորված ավանդը: Ընդ որում, եթե ստացված դրական տարբերությունը դրամային է, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 1) ենթակետի, հակառակ դեպքում՝ համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 2) ենթակետի:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*«Ներդրումային ընկերությունների կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կարգը» հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ներդրումային ընկերությունների կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կարգը»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ» հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 սեպտեմբերի 2008 թ., N 268-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. սեպտեմբերի 9-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.10.08 թ. (ՀՀԳՏ N37 (311), 3.11.08):

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 268-Ն որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

Կ Ա Ր Գ

Գլուխ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի (այսուհետ՝ ներդրումային ընկերություններ) կողմից իրենց ինտերնետային կայքում և մամուլում իրենց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունների շրջանակը և հրապարակման կարգը:

Գլուխ 2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԴ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Ներդրումային ընկերություններն իրենց ինտերնետային կայքերում պետք է հրապարակեն (փոփոխությունների դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում թարմացնեն) սույն գլխում սահմանված տեղեկությունները և մշտապես ապահովեն դրանց հասանելիությունը:

3. Ներդրումային ընկերության ինտերնետային կայքում տեղադրվում են հղումներ հետևյալ տեղեկությունները պարունակող էջերին.

1) ընկերության մասին,
2) ներդրումային ընկերության կազմակերպական կառուցվածքը,
3) ղեկավարները և որակավորված մասնագետները,
4) կորպորատիվ կառավարում,
5) ֆինանսական հաշվետվությունները,
6) մատուցվող ծառայությունները,
7) հիմնական տնտեսական նորմատիվներ:

4. «Ընկերության մասին» մասում ներառվում են հետևյալ տեղեկությունները.

1) ներդրումային ընկերության առաքելությունը, գործունեության նպատակները,
2) ներդրումային ընկերության լիցենզավորման և գրանցման ամսաթվերը, լիցենզիայի պատճենը,
3) ներդրումային ընկերության գործունեության պատմության ընթացքում վերակազմակերպման, անվանափոխության, գործունեության բնույթի փոփոխության և նման այլ իրադարձությունների մասին տեղեկություններ (նշել նաև այդ իրադարձությունների տարեթվերը):

5. «Ներդրումային ընկերության կազմակերպական կառուցվածքը» մասում ներկայացվում են.

1) ներդրումային ընկերության ներքին կազմակերպական կառուցվածքը՝ գծապատկերի (սխեմայի) տեսքով,
2) եթե ներդրումային ընկերությունն ընդգրկված է առևտրային, բանկային, ֆինանսական խմբի կամ միության, կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա ներկայացվում է համապատասխանաբար տվյալ խմբի, միության կառուցվածքը՝ սխեմայի տեսքով, կամ հղում է տրվում համապատասխան ինտերնետային էջին, որտեղ առկա է այդ կառուցվածքի գծապատկերային (սխեմատիկ) նկարագրությունը,
3) ներդրումային ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գտնվելու վայրերը և հեռախոսահամարները:

6. «Ղեկավարները և որակավորված մասնագետները» մասում ներառվում են հետևյալ տեղեկությունները.

1) ներդրումային ընկերության խորհրդի (առկայության դեպքում), ներքին աուդիտի ստորաբաժանման անդամների, ինչպես նաև գործադիր տնօրենի, նրա տեղակալի (տեղակալների)՝ առկայության դեպքում, գլխավոր հաշվապահի (եթե ընկերության կողմից հաշվապահական հաշվառման իրականացման գործառույթը պատվիրակվել է, ապա այդ գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի) անուններն ու ազգանունները, պաշտոնները,
2) Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտա-

կան համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 41-րդ կետի 11-րդ ենթակետի համապատասխան մասնագիտական որակավորման վկայական ունեցող աշխատակիցների ցանկը (անունը, ազգանունը, որակավորման (մատուցվող ծառայության) տեսակը):

7. «Կորպորատիվ կառավարում» մասում ներկայացվում են ներդրումային ընկերության կողմից որդեգրված կորպորատիվ կառավարման սկզբունքները: Առնվազն պետք է առկա լինեն.

1) ներդրումային ընկերության կանոնադրությունը,
2) ներդրումային ընկերության գործադիր մարմնի աշխատանքի գնահատման սկզբունքները,
3) ներդրումային ընկերության աշխատակիցների միջին եռամսյակային թիվը:

8. Եթե ներդրումային ընկերությունը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը հրապարակում է իր ինտերնետային կայքում, ապա «Ֆինանսական հաշվետվությունները» մասում տեղադրվում են ներդրումային ընկերության եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ տրված աուդիտորական եզրակացությունները: Ներդրումային ընկերությունների կողմից իրենց ինտերնետային կայքում տեղադրված ֆինանսական հաշվետվությունները (ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային) և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ տրված աուդիտորական եզրակացությունները մշտապես պետք է տեղադրված մնան ներդրումային ընկերության ինտերնետային կայքում՝ ներդրումային ընկերությունների Ֆինանսական հաշվետվությունների արխիվ ձևավորելու նպատակով:

9. «Մատուցվող ծառայությունները» մասում ներկայացվում են ներդրումային ընկերության կողմից մատուցվող բոլոր ծառայությունների մասին էական տեղեկությունները, ինչպես նաև այն հեռախոսահամարները, որոնցով կարելի է սպառիչ տեղեկություններ ստանալ ներդրումային ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ: Մատուցվող ծառայությունների մասին տեղեկությունները պետք է լինեն ամբողջական, ներկայացվեն պարզ, սպառողների համար հասկանալի ձևով, պետք է ներառեն մատուցվող ծառայությունների բոլոր առանձնահատկությունները: Մատուցվող ծառայությունների մասին առնվազն ներկայացվում է տեղեկատվություն.

1) ծառայությունների անվանման և տեսակների վերաբերյալ, ընդ որում, պետք է նշվի, թե ինչպիսի հաճախորդների համար է նախատեսված ծառայությունը (իրավաբանական, թե՞ ֆիզիկական անձ հաճախորդների),
2) մատուցվող ծառայություններից օգտվելու միջնորդավճարների, ծախսերի և այլ վճարների, այլ հնարավոր լրացուցիչ գանձումների չափի վերաբերյալ, եթե դա հնարավոր չէ, ապա պետք է նշվեն տվյալ ծառայության տեսակը և դրա սակագնի հրապարակման անհնարինության խելամիտ հիմնավորումը,
3) ծառայություններից օգտվելու համար վճարվելիք գումարների հաշվարկման կարգի վերաբերյալ,
4) հաճախորդի կողմից և հաճախորդին վճարումներ կատարելու պայմանների, եղանակների և ժամկետների վերաբերյալ,
5) հաճախորդների հետ կապի իրականացման կարգի և ժամկետների վերաբերյալ (հաճախորդից պատվերներ և առանձնահատուկ ցուցումներ ստանալու դեպքում),
6) պայմանագրերի ժամկետների վերաբերյալ (ինչ ժամկետայնությամբ ներդրումային ծառայությունների պայմանագրեր կարող են կնքվել),
7) կնքված պայմանագրերի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգի վերաբերյալ,
8) արժեթղթերի տեսակների, որոնցում կարող են ներդրվել հաճախորդների միջոցները, ինչպես նաև ընդհանրական տեղեկություններ այդ արժեթղթերի և նրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ,
9) հաճախորդներից գործարքների իրականացման պատվերների և հանձնարարականների ընդունման և կատարման ընթացակարգերի վերաբերյալ,
10) գործարքների իրականացման վայրերի վերաբերյալ,
11) շահերի բախման քաղաքականության վերաբերյալ,
12) մատուցվող ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի վերաբերյալ:

10. Եթե ներդրումային ընկերությունն իրականացնում է նաև վարկային կազմակերպության գործունեություն, ապա «Մատուցվող ծառայություններ» մասում ներկայացնում է նաև տեղեկատվություն հետևյալի մասին.

1) վարկավորվող գումարի նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, եթե այդպիսիք սահմանված են ներդրումային ընկերության կողմից,

2) վարկերի տրամադրման նվազագույն և առավելագույն ժամկետները,
3) վարկերի տոկոսադրույքի հաշվարկման ձևը՝ այդ թվում նշելով՝ տոկոսադրույքը կիրառվում է մայր գումարի, թե նվազող մնացորդի նկատմամբ,
4) վարկերի տարեկան տոկոսադրույքի չափը՝ դրամով և արտարժույթով տրամադրվող վարկերի համար: Եթե տոկոսադրույքի վրա կարող են ազդել նաև այլ գործոններ, ապա այդ գործոնների հիմքերը նույնպես պետք է նշվեն,
5) մարումների հաճախականությունը,
6) միջնորդավճարների, ինչպես նաև այլ հնարավոր լրացուցիչ գանձումների չափը, եթե այդպիսիք առկա են (օրինակ՝ տույժերի չափը և կիրառման դեպքերը),
7) ապահովության (գրավի) տեսակը, եթե նման պահանջ առկա է: Ընդ որում, եթե վարկը տրամադրվում է վարկառուի գույքի գրավով, որը կարող է ներդրումային ընկերության կողմից բռնագանձվել վարկառուի կողմից վարկի մարումները ուշացնելու կամ վարկը չմարելու պատճառով, գույքի հնարավոր բռնագանձման մասին հայտարարությունը պարտադիր է:

11. Ներդրումային ընկերություններն իրենց ինտերնետային կայքերում պետք է նշեն նաև իրենց կողմից ընտրված նպատակային շուկաների, հաճախորդների թիրախային խմբերի մասին, եթե ընկերությունը որդեգրել է նման քաղաքականություն:

12. «Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ» մասում առնվազն եռամսյակը մեկ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները (համաձայն հավելված 2-ի) առնվազն վերջին մեկ տարվա կտրվածքով.

1) հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունում ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները: «Փաստացի մեծությունը» սյունակում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա նորմատիվի փաստացի մեծությունը: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը» սյունակում արտացոլվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվների թույլատրելի մեծությունը՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ով սահմանված կարգով հաշվարկված մեծությունը: «Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունակում արտացոլվում է նորմատիվի գծով խախտումների քանակը, իսկ եթե խախտում առկա չէ, համապատասխան տողում լրացվում են «չի խախտվել» բառերը,
2) եթե ներդրումային ընկերության արտաքին աուդիտի եզրակացությամբ ճշգրտված և հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքում ներդրումային ընկերությունը խախտում է հիմնական տնտեսական նորմատիվ (նորմատիվներ), ապա պարտավոր է վերահրապարակել այն եռամսյակների ճշգրտված հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունները, որոնցում հրապարակվող հաշվետվությունների ճշգրտման արդյունքում առաջացել է նորմատիվի (նորմատիվների) խախտումը:

13. Ներդրումային ընկերություններն իրենց ինտերնետային կայքում տեղադրում են և օրական կտրվածքով թարմացնում են իրենց կողմից մատուցվող բոլոր ծառայությունների վերաբերյալ առնվազն սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված տեղեկությունները:

14. Ներդրումային ընկերությունների կողմից իրենց ինտերնետային կայքերում սույն կարգի 2-րդ գլխի 3-րդ կետով բացահայտվող տեղեկությունները ներկայացվում են միայն համապատասխան հղումների ներքո:

15. Սույն գլխով սահմանված տեղեկություններից բացի՝ ներդրումային ընկերությունները կարող են իրենց ինտերնետային կայքերում տեղադրել լրացուցիչ այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՄՈՒԼՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16. Եթե ներդրումային ընկերությունը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իր եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը հրապարակում է մամուլում, ապա դրանք պետք է հրապարակվեն 1000 և ավելի տպաքանակ ունեցող մամուլում:

17. Մամուլում հրապարակված եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվություններին և աուդիտորական եզրակացությանը կից ներդրումային ընկերությունները պետք է հրապարակեն նաև իրենց ինտերնետային կայքի հասցեն և հայտարարություն այն մասին, որ իրենց եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները տեղադրված են այդ ինտերնետային կայքում, եթե ներդրումային ընկերությունը իր եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները տեղադրել է նաև ինտերնետային կայքում:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 268-Ն որոշման

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

(եռամսյակային)

_____ թ-ից _____ թ.

(հազար դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված ներդրումային ընկերության համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
1. Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ			
2. Կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվ			

Կ.Տ.

Ներդրումային ընկերության վարչության նախագահ _____

(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը և գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 20-րդ, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. սեպտեմբերի 9-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.10.08 թ. (ՀՀԳՏ N37 (311), 3.11.08):

1. Հաստատել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը»՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 սեպտեմբերի 2008 թ., N 269-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը գործում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա:

2. Սույն կանոնակարգը սահմանում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) կանխարգելման ոլորտում՝

ա) ֆինանսական հաստատությունների կառավարման մարմինների, ինչպես նաև ներքին դիտարկումների մարմնի գործառույթների և դրանց իրականացման կարգի նվազագույն պահանջները.

բ) ներքին իրավական ակտերի հաստատման և փոփոխման կարգը, ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն չափանիշները.

գ) ՓԼ/ԱՖ բարձր և ցածր ռիսկի չափանիշներն ու դրանց որոշման կարգը.

դ) հաճախորդի նույնականացման նվազագույն կանոնները.

ե) հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ և պարզեցված) ուսումնասիրության նվազագույն կանոնները.

զ) ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից փաստաթղթերի (տեղեկատվության) հավաքագրման, հաշվառման ու թարմացման նվազագույն կանոնները.

է) ֆինանսական հաստատությունների կողմից գործարքների կասկածելիության որոշման և այդ կապակցությամբ լիազոր մարմնին հաշվետվության տրամադրման հարցի քննարկման նվազագույն կանոնները.

ը) ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների գործունեության աուդիտին ներկայացվող կանոնները.

թ) ֆինանսական հաստատությունների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ընտրության, ուսուցման, որակավորման նվազագույն կանոնները:

3. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց (այսուհետ՝ ֆինանսական հաստատությունների) նկատմամբ՝

1) բանկերի.

2) վարկային կազմակերպությունների.

3) արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց.

4) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձանց.

5) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց.

6) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ կարգավորվող շուկայի արժեթղթերի կենտրոնացված պահառուի.

7) ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց.

8) գրավատների:

ԳԼՈՒԽ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Ֆինանսական հաստատության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) և գործադիր մարմինը պատասխանատու են ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման համար, ապահովում են դրա ընթացիկ աշխատանքն ու վերահսկողությունը:

5. Ֆինանսական հաստատության կառավարման համակարգում խորհրդի բացակայության դեպքում սույն գլխի 8-րդ կետով սահմանված գործառույթներն իրականացնում է գործադիր մարմինը:

6. Ֆինանսական հաստատության կառավարման համակարգում խորհրդի և գործադիր մարմնի բացակայության դեպքում սույն գլխի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված գործառույթներն իրականացնում են ներքին իրավական ակտերով սահմանված կառավարման մարմինները:

7. Եթե հաշվետվություն տրամադրող անձն անհատ ձեռնարկատեր է, ապա սույն գլխի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված գործառույթներն իրականացնում է անհատ ձեռնարկատերը կամ նրա լիազորած անձը:

8. Ֆինանսական հաստատության խորհուրդը ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում՝

1) սահմանում է ֆինանսական հաստատության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունը.
2) հաստատում է ներքին դիտարկումների մարմնի և ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, ինչպես նաև վերահսկողություն իրականացնում այդ ծրագրերի իրականացման նկատմամբ.
3) անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին դիտարկումների մարմնի ուսումնասիրություններ, հաստատում է աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը.
4) հաստատում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերը (այսուհետ՝ ներքին իրավական ակտեր).
5) ստանում և քննարկում է ներքին դիտարկումների մարմնի և (կամ) ներքին աուդիտի հաշվետվությունները ներքին իրավական ակտերի կատարման վիճակի մասին՝ իր կողմից սահմանված հաճախականությամբ.
6) հաստատում է ներքին դիտարկումների մարմնի կողմից կառավարման բարձրագույն մարմնին (բանկերում՝ խորհրդին) ներկայացվող հաշվետվությունները.
7) հսկում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի արդյունավետության ուսումնասիրության իրականացումը:

9. Ֆինանսական հաստատության գործադիր մարմինը (այսուհետ՝ գործադիր մարմին) ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում՝

1) ապահովում է ներքին իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը.
2) ապահովում է կառավարման բարձրագույն մարմնի սահմանած ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականության և ընթացակարգերի ներդրման, ինչպես նաև դրանց ընթացիկ արդյունավետ իրականացման համար.
3) խորհրդի համաձայնությամբ՝ նշանակում և աշխատանքից ազատում է ներքին դիտարկումների մարմնի ղեկավարին (աշխատակիցներին).
4) ապահովում է ֆինանսական հաստատության աշխատակիցների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին իրավական ակտերի, ինչպես նաև էթիկայի կանոնների լիարժեք տիրապետումը.
5) ներքին դիտարկումների մարմնի հետ մեկտեղ ապահովում է իր աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում պատշաճ ուսուցումը և վերապատրաստումը.
6) ապահովում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության, այդ թվում՝ պարզեցված կամ հավելյալ ուսումնասիրության, ընթացիկ մոնիտորինգի, ինչպես նաև տեղեկատվության հաշվառման, հավաքագրման ու թարմացման իրականացումը.
7) կազմակերպում է ներքին դիտարկումների մարմնի անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածությունը.
8) իրականացնում է ներքին դիտարկումների մարմնի ուսումնասիրությունների, աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները.
9) իրականացնում է սույն կանոնակարգով, ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 3. ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ ՄԱՐՄԻՆԸ

10. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարը (աշխատակիցը) նշանակվում և ազատվում է գործադիր մարմնի կողմից՝ խորհրդի համաձայնությամբ:

11. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարը (աշխատակիցը) պետք է ունենա բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

12. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավար (աշխատակից) չեն կարող լինել այն անձինք, որոնք՝

ա) ունեն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն.

բ) դատարանի կողմից զրկված են ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

գ) սնանկ են ճանաչվել և ունեն չմարված (չներված) պարտավորություններ.

դ) քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ.

ե) ունեն բացասական գործարար համբավ բանկային համակարգում.

զ) չեն համապատասխանում սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված չափանիշներին.

է) փոխկապակցված են տվյալ ֆինանսական հաստատության ղեկավարների հետ:

13. Բանկերում ներքին դիտարկումների գործառույթը չի կարող դրվել հաճախորդների սպասարկման ստորաբաժանման աշխատակցի վրա:

14. Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին դիտարկումների գործառույթը ֆինանսական հաստատության այլ ստորաբաժանման կամ աշխատակցի վրա դնելու դեպքում ստորաբաժանման կամ աշխատակցի աշխատանքային պարտականություններում ՓԼ/ԱՖ ներքին դիտարկումների գործառույթը պետք է հստակ նկարագրված լինի, և բավարար ժամանակ տրամադրվի դրա իրականացման համար: Նույն հոդվածի համաձայն՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին դիտարկումների գործառույթը մասնագիտացված գործունեություն իրականացնող համապատասխան անձի վերապահել կարելի է, եթե այդ անձը ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտի մասնագիտացված խորհրդատվական կազմակերպություն է:

15. Ներքին դիտարկումների մարմնին պետք է անմիջականորեն հասանելի լինեն հաճախորդի հաշիվներին և կատարված գործարքներին վերաբերող բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ վարկային գործեր, աշխատանքային փաստաթղթեր, պայմանագրեր և այլն), և իրավունք վերապահվի գործարար հարաբերությունների (գործարքների), ինչպես նաև հաճախորդների, լիազորված անձանց և իրական շահառուների վերաբերյալ պարզաբանումներ պահանջել այլ ստորաբաժանումների ցանկացած աշխատակցից:

16. Ֆինանսական հաստատությունը պետք է իր ներքին իրավական ակտերով նախատեսի, որ ներքին դիտարկումների մարմինն օժանդակում և խորհրդատվություն է ներկայացնում խորհրդին և գործադիր մարմնին ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված իրենց գործառույթները կատարելու հարցերում:

17. Ներքին դիտարկումների մարմինը նվազագույնը՝

1) մշակում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին իրավական ակտերը, դրանք ներկայացնում է խորհրդի հաստատմանը.

2) իրականացնում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիտորինգ, առաջարկներ է ներկայացնում դրանց արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ.

3) ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ապահովում է ֆինանսական հաստատության կապը Լիազոր մարմնի հետ.

4) ապահովում է ֆինանսական հաստատության անունից Լիազոր մարմնին տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվությունների և այլ տեղեկությունների տրամադրումը.

5) կասկածելի գործարար հարաբերությունների կամ գործարքների բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ և այլ գործողություններ.

6) հետևում է գործարար հարաբերությունների ընթացիկ մոնիտորինգին և պարբերաբար վերանայում է տեղեկությունների ճշգրտման ու թարմացման ընթացքը.

7) ապահովում է ֆինանսական հաստատության հաճախորդների դասակարգումը՝ ըստ ռիսկի աստիճանի, իրականացնում է բարձր ռիսկի չափանիշների հետ գործարար հարաբերությունների ընթացիկ մոնիտորինգ.

8) կազմակերպում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին ուսուցումը և վերապատրաստումը, իրականացնում է ուսուցման ծրագրերի ընթացքի ու արդյունքների մոնիտորինգ.

9) որոշում է կայացնում գործարար հարաբերությունը կամ գործարքը կասեցնելու կամ իրականացումը մերժելու, ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցները սառեցնելու հարցի վերաբերյալ, այդ հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկում է հաճախորդներին սպասարկող աշխատակցի հետ, իսկ տարաձայնություններ առաջանալու դեպքում կայացնում է վճռական որոշում.

10) խորհրդի սահմանած չափանիշների հիման վրա սահմանված կարգով խորհրդին տեղեկացնում է գործարար հարաբերության կամ գործարքի կասեցման կամ իրականացումը մերժելու մասին.

11) իրականացնում է տեղեկատվության հաշվառման և պահպանման մոնիտորինգ.

12) իրականացնում է սույն կանոնակարգով, ներքին իրավական ակտերով սահմանված կամ խորհրդի կողմից հանձնարարված այլ գործառույթներ:

18. Ներքին դիտարկումների մարմնի կողմից կառավարման բարձրագույն մարմնին (բանկերում՝ խորհրդին) ներկայացվող հերթական հաշվետվությունը պետք է նվազագույնը ներառի՝

1) պարտադիր տեղեկացման ենթակա, կասկածելի գործարքների ու գործարար հարաբերությունների թիվը, ինչպես նաև կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) համառոտ նկարագրությունը.
2) այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն ներկայացվել որպես կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ.
3) ֆինանսական հաստատության կողմից կասեցված կամ իրականացումը մերժված գործարար հարաբերությունների և գործարքների թիվը և համառոտ նկարագրությունը, կասեցված գործարքների արժեքը.
4) սառեցված ֆինանսական միջոցների չափը.
5) ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 4. ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ, ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

19. Ֆինանսական հաստատության ներքին իրավական ակտերը հաստատվում և փոփոխվում են խորհրդի կողմից:

20. Ներքին իրավական ակտերը հաստատվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում ներկայացվում են Լիազոր մարմնին: Լիազոր մարմնի ներկայացրած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ներքին իրավական ակտերը վերանայվում են քսանօրյա ժամկետում, իսկ փոփոխված (խմբագրված) ակտերը կրկին Լիազոր մարմնին են ներկայացվում մեկշաբաթյա ժամկետում:

21. Ի լրումն Օրենքի 21-րդ հոդվածով ներքին իրավական ակտերի բովանդակությանը ներկայացված պահանջների՝ ֆինանսական հաստատության ներքին իրավական ակտերը պետք է սահմանեն նաև՝

ա) հաճախորդներին սպասարկող աշխատակցի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու, դրանց կասեցման կամ իրականացումը մերժելու առաջարկությունը ներքին դիտարկումների մարմնին ներկայացնելու գործընթացը.
բ) ներքին դիտարկումների մարմնի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման կամ իրականացումը մերժելու մասին խորհրդին տեղեկացնելու չափանիշները և տեղեկացման գործընթացը:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Բարձր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝

1) օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) իրավաբանական անձ կամ բնակվող ֆիզիկական անձ հաճախորդը.
2) հաճախորդի գործարար հարաբերության կամ միանգամյա գործարքի կապն այնպիսի պետությունների (տարածքների) հետ (Լիազոր մարմնի և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված ցանկերի համաձայն), որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից հրապարակված այն երկրների հետ, որոնց նկատմամբ կիրառվում են պատժամիջոցներ.
3) հաճախորդի բնակվելը (գտնվելը) սույն կետի 2-րդ ենթակետում նշված պետություններում (տարածքներում).
4) բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները.
5) ըստ ներկայացնողի արժեթղթերը (այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկերը), որոնք շրջանառվում են գործարար հարաբերության ընթացքում կամ հանդիսանում են միանգամյա գործարքի առարկա.
6) այն դեպքերը, երբ առաջանում են նույնականացման համար նախկինում ձեռք բերված տվյալների ճշգրտության և համարժեքության վերաբերյալ կասկածներ, այդ թվում՝ իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված.
7) այն դեպքերը, երբ հայտնի է դառնում, որ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը կամ գործարքի կատարումը մերժվել է այլ ֆինանսական հաստատության կողմից.
8) այն դեպքերը, երբ առկա է կանխիկ դրամի մեծածավալ շրջանառություն իրականացնող հաճախորդ, գործարար հարաբերություն կամ միանգամյա գործարք.
9) հաճախորդները, որոնց հաշիվներով իրականացվում են միջոցների հաճախակի և անբացատրելի շարժեր դեպի տարբեր ֆինանսական հաստատություններ.

10) քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների, նրանց հետ փոխկապակցված անձանց հետ գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը.
11) սահմանափակ թվով հատուկ կատեգորիայի հաճախորդների համար անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը.
12) առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ միանգամյա գործարքի կատարումը էլեկտրոնային եղանակով կամ թղթակցության կարգով (առանց առերես շփման հարաբերությունները).
13) այնպիսի հաշվով կամ միջոցով գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը, որոնցով 6 ամսից ավելի որևէ գործարք չի կատարվել.
14) թղթակցային բանկային հարաբերությունները.
15) հաճախորդի վարկավորումը, երբ տրամադրվող վարկերն ապահովված են լինում նույն հաստատությունում ներդրված ավանդով:

23. Ֆինանսական հաստատության ներքին իրավական ակտերով կարող են նախատեսվել նաև բարձր ռիսկի այլ չափանիշներ ու պահանջներ:

24. Բարձր ռիսկի չափանիշները որոշելու համար կարող են հաշվի առնվել նաև հետևյալ հանգամանքները՝

1) հաճախորդը Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ռեզիդենտ չէ, կամ հաճախորդի նախկին կամ ներկա քաղաքացիությունը կամ ռեզիդենտությունը ՓԼ/ԱՖ առումով բարձր ռիսկ է ենթադրում.
2) հաճախորդը նախկինում ներգրավված է եղել գործարար հարաբերությունում կամ գործարքում, որը ՓԼ/ԱՖ տեսանկյունից կասկածելի է եղել.
3) իրավաբանական անձի հաշիվները, միջոցները կամ հեղինակությունը օգտագործվում են ֆիզիկական անձի ակտիվների շրջանառության նպատակով.
4) իրավաբանական անձի կառուցվածքը կամ կառավարումը առանց հիմնավոր պատճառի բարդ է.
5) իրավաբանական անձի մասնակիցներին հնարավոր չէ կամ դժվար է բացահայտել.
6) հաճախորդ իրավաբանական անձը թողարկում է ըստ ներկայացնողի արժեթղթեր:

25. Բարձր ռիսկի չափանիշների առկայությունը որոշվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում: Բարձր ռիսկի չափանիշները պարզելու և գնահատելու նպատակով ֆինանսական հաստատությունը համադրում է՝

1) հաճախորդին նույնականացնող տվյալները.
2) հաճախորդի գործարար բնութագիրը.
3) հաճախորդի գործարար հարաբերությունները.
4) հաճախորդի միանգամյա գործարքների բնույթը և նպատակը.
5) հանրամատչելի աղբյուրներից ստացված տեղեկությունները.
6) այլ հանգամանքներ:

26. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս կամ գործարքներ կնքելիս ֆինանսական հաստատությունը նվազագույնը իրականացնում է հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝

1) հաշվարկների կատարումը միայն անկանխիկ ձևով՝ բացառությամբ վճարային տերմինալների, բանկոմատների միջոցով իրականացվող կանխիկ վճարումների.
2) պահանջում է լրացուցիչ փաստաթղթեր, ինչպիսիք են՝ պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

27. Անձի՝ քաղաքական ազդեցություն ունենալու փաստը որոշելու նպատակով ֆինանսական հաստատությունը կարող է իրականացնել հետևյալ գործողությունները՝

1) հնարավոր հաճախորդներից տեղեկությունների հարցում կամ հաճախորդների ու նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեության բնույթի վերաբերյալ տվյալների ստացում.
2) հրապարակային տեղեկատվության ուսումնասիրում և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ առկա մասնավոր տվյալների բազաների (Ռեորլդ-Չեք և այլն) օգտագործում:

ԳԼՈՒԽ 6. ՑԱԾՐ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

28. Ցածր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝

1) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները.
2) պետական մարմինները.
3) տեղական ինքնակառավարման մարմինները.
4) պետության կողմից հիմնադրված կազմակերպությունները.
5) Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջե կատարվող վճարումները.
6) հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումները:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

29. Հաճախորդի, այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի նույնականացումը կատարվում է Օրենքի 15-րդ հոդվածի հիման վրա:

30. Ֆինանսական հաստատությունը հաճախորդի (լիազորված անձի) հետ գործարար հարաբերություն հաստատելուց կամ միանգամյա գործարք կատարելուց առաջ, սույն կանոնակարգով և հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով սահմանված բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում, իրական շահառուի առկայությունը պարզում է հաճախորդի (լիազորված անձի) հայտարարության հիման վրա՝ հավելված 2-ով ներկայացվող ձևի համաձայն: Գործարար հարաբերության ընթացքում սույն կետով նախատեսված հայտարարության ձևը լրացվում (փոփոխվում) է միայն իրական շահառուի ի հայտ գալու կամ իրական շահառուի փոփոխության դեպքում:

31. Հաճախորդի նույնականացման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները պետք է ստուգվեն հաճախորդին սպասարկող ստորաբաժանման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ ներքին դիտարկումների մարմնի կամ այլ ստորաբաժանումների կողմից: Ստուգումը կարող է չներառել նույնականացնող բոլոր տեղեկությունների ստուգումը, սակայն պետք է բավարար լինի հաճախորդի իրական ինքնությունը պարզելու համար: Այդ նպատակով ֆինանսական հաստատության կողմից կարող են օգտագործվել ինչպես փաստաթղթային, այնպես էլ ոչ փաստաթղթային ստուգման մեթոդներ:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ՝ ՀԱՎԵԼՅԱԼ ԵՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ) ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

32. Գործարար հարաբերությունում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս ֆինանսական հաստատությունը պետք է նվազագույնը՝

1) ստուգի գործարքների միջև առկա փոխադարձ կապը, բացահայտի այդ կապի հնարավոր սխեմաները, ինչպես նաև որոշի, թե ինչ նպատակ ունեն նշված գործարքները.
2) ստուգի, թե արդյոք իրականացվող գործարքների էությունը համապատասխանում է հաճախորդի կողմից իրականացվող գործունեության տեսակներին.
3) հավաքագրի հաճախորդի եկամտի աղբյուրների վերաբերյալ հնարավոր տեղեկություններ.
4) համադրի հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը, ծավալները.
5) գնահատի գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը՝ կասկածելի գործարքների ու գործարար հարաբերությունների հիմքերի և չափանիշների հետ համադրություն իրականացնելու միջոցով.
6) ստուգի՝ արդյո՞ք առկա են այնպիսի գործարար հարաբերություններ և (կամ) միանգամյա գործարքներ, որոնցով հաճախորդը նպատակ ունի խուսափել ֆինանսական հաստատության կողմից Լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու պարտականության կատարումից.
7) ճշտի որոշակի միավոր ժամանակահատվածում գործարքների տեսակները, հաճախականությունը և ժամանակագրությունը.
8) իրականացնի գործարքի կողմերի, ստացողի, իրական շահառուի, ինչպես նաև լիազորված անձի հաշվառում և իրականացնի համադրում հաճախորդների փոխկապակցվածությունը պարզելու նպատակով.
9) իրականացնի իր ներքին իրավական ակտով սահմանված այլ միջոցառումներ:

33. Ֆինանսական հաստատությունը պետք է հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնի բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում:

34. Հավելյալ ուսումնասիրություն իրականացնելիս ֆինանսական հաստատությունը նվազագույնը՝

1) առավել ամբողջական ու խորացված ստուգում է հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելիս պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) իսկությունը, ինչպես, օրինակ, պահանջում է հիմնավորող այլ փաստաթղթեր (տեղեկություններ).
2) պահանջում է հաճախորդի ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկություններ.
3) տվյալների բազաներով կատարում է հաճախորդի, գործարար հարաբերության և գործարքի վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.
4) հաշվետվություն տրամադրող այլ անձանց կամ այլ, այդ թվում՝ օտարերկրյա գործընկերներին հարցումներ է կատարում՝ ճշտելու հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների վերաբերյալ տեղեկությունները.
5) ձեռնարկում է այլ միջոցներ՝ հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների ու գործարքների վերաբերյալ իրական ու ամբողջական պատկերացում կազմելու համար:

35. Հաճախորդի հավելյալ ուսումնասիրության միջոցով ֆինանսական հաստատությունը պետք է հիմնավոր պարզաբանումներ և բացատրություններ ստանա և այդ կերպ իրական ու ամբողջական պատկերացում կազմի տվյալ հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների ու միանգամյա գործարքների մասին: Եթե ձեռնարկված միջոցների արդյունքում ֆինանսական հաստատությունն իրական ու ամբողջական պատկերացում չի կազմում, ապա ֆինանսական հաստատությունը պետք է քննարկի այդ դեպքի վերաբերյալ Լիազոր մարմնին կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու հնարավորությունը:

36. Ֆինանսական հաստատությունը կարող է հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն իրականացնել ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում:

37. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը ֆիզիկական անձանց համար նվազագույնը ներառում է հետևյալ տեղեկությունների պարզումը և հաշվառումը՝

1) անունը, ազգանունը.
2) հաշվի համարը՝ առկայության դեպքում.
3) անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

38. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը իրավաբանական անձանց համար նվազագույնը ներառում է հետևյալ տեղեկությունների պարզումը և հաշվառումը՝

1) իրավաբանական անձի անվանումը.
2) պետական գրանցման վկայականի համարը.
3) բանկային հաշիվները տնօրինելու իրավասություն ունեցող անձին նույնականացնող տեղեկությունները:

ԳԼՈՒԽ 9. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈՒ ԹԱՐՄԱՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐ

39. Ֆինանսական հաստատությունները սույն կանոնակարգի 44-րդ կետում թվարկված տեղեկատվությունը պետք է հավաքագրեն այնպիսի եղանակով, որը կապահովի հետագայում դրա օգտագործումը որպես ապացույց: Տեղեկատվությունն ամրագրող փաստաթղթերը պետք է ունենան դրանց ներկայացվող բոլոր վավերապայմանները:

40. Տեղեկատվությունը պետք է հաշվառվի: Հաշվառումը պետք է կատարվի դասակարգված տվյալների բազաների միջոցով: Տեղեկատվության հաշվառումը պետք է իրականացվի այնպես, որ դրա հիման վրա հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում վերականգնել այն աշխատակցի տվյալները, որն իրականացրել է նույնականացում կամ հաշվառման ենթակա այլ գործողություններ:

41. Տեղեկատվությունը կարող է պահվել փաստաթղթային կարգով, համակարգիչներում, էլեկտրոնային կրիչներում:

42. Ֆինանսական հաստատությունը պետք է ապահովի հաշվառված ու պահպանվող տեղեկատվության անվտանգությունը, գաղտնիությունը և կանխի դրա չթույլատրված օգտագործումը, տնօրինումը:

43. Ֆինանսական հաստատությունն իր ներքին իրավական ակտերով սահմանում է հաճախորդի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության թարմացման հաճախականությունը:

44. Ֆինանսական հաստատությունը պետք է հաշվառի և պահպանի՝

1) հաճախորդի նույնականացման տվյալները՝ Օրենքով սահմանված կարգով.
2) գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները՝ Օրենքով սահմանված կարգով.
3) գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության որոշման նպատակով կատարված ցանկացած վերլուծություն և կատարված այլ գործողությունների վերաբերյալ տվյալներ.
4) կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև հաշվետվության հիմքում ընկած տեղեկություններն ու հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ հարցի քննարկումների արձանագրությունները.
5) կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին այն տվյալներն ու ենթադրությունները, որոնց հետ կապված՝ Լիազոր մարմնին չի ներկայացվել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ (ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԿԱՍԿԱԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՅԴ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

45. Հաճախորդներին սպասարկող աշխատակիցը գործարար հարաբերություններում կամ գործարքներում Օրենքով, Լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներով նկարագրված չափանիշներին կամ տիպաբանություններին համապատասխան կամ իր կարծիքի հիման վրա ՓԼ/ԱՖ կասկածների բացահայտ-

ման դեպքում ներքին իրավական ակտերով սահմանված կարգով այդ մասին անմիջապես հայտնում է ներքին դիտարկումների մարմնին:

46. Ներքին դիտարկումների մարմինը հաճախորդներին սպասարկող աշխատակցի, այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության կամ իր սեփական դիտարկումների արդյունքում կասկածելի գործարքի բացահայտման դեպքում այդ մասին Լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի գործարքի մասին հաշվետվություն:

47. Ֆինանսական հաստատությունը պետք է իր ներքին իրավական ակտով սահմանի գործարար հարաբերությունների և գործարքների կասկածելիության որոշման և այդ կապակցությամբ Լիազոր մարմնին հաշվետվության տրամադրման հարցի քննարկման ներքին ընթացակարգեր: Նշված ընթացակարգերը պետք է նվազագույնը սահմանեն՝

1) կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ նախնական տեղեկությունների (ենթադրությունների) վերաբերյալ ներքին դիտարկումների մարմնին տեղեկացնելու կարգը.
2) ներքին դիտարկումների մարմնի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների մշակման, ստուգման և հնարավոր եզրակացություններ կազմելու կարգն ու ժամկետները.
3) գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության որոշման նպատակով հնարավոր գործողություններն ու վերլուծությունները, այդ թվում՝ ներպետական ու միջազգային տվյալների բազաներին հասանելիությունը, հարցումները, դրանց արդյունքների գնահատման չափանիշներն ու ամփոփման կարգը:

48. Լիազոր մարմինը կարող է առանձին անուններ (անվանումներ) կամ այլ տվյալներ փոխանցել ֆինանսական հաստատություններին և ցուցում տալ, որ այդ տվյալների հետ առնչվող որևէ գործարքի կամ գործարար հարաբերության առկայության դեպքում ներկայացվի կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն: Նման ցուցումների հիման վրա, եթե ժամկետ չի նշվում, ֆինանսական հաստատությունները պետք է ոչ պակաս, քան տասնօրյա պարբերականությամբ վերանայեն իրենց հաճախորդների հետ գործարար հարաբերություններն ու միանգամյա գործարքները և հնարավոր առնչվող տեղեկություններ հայտնաբերելու դեպքում ներկայացնեն կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

49. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերլուծության նպատակներով Լիազոր մարմնի ներկայացրած հարցումները, այդ թվում՝ լրացուցիչ փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման պահանջը, ֆինանսական հաստատությունը պետք է կատարի հարցումների կամ պահանջի մեջ նշված հնարավոր սեղմ ժամկետներում:

ԳԼՈՒԽ 11. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

50. Ներքին աուդիտը, Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ գործադիր մարմինը և ներքին դիտարկումների մարմինն ապահովում են ֆինանսական հաստատության լիարժեք համապատասխանությունը Օրենքով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին: Այն դեպքում, երբ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթը վերապահված է ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ աշխատակցին, ապա ստուգումն իրականացվում է ֆինանսական հաստատության ներքին իրավական ակտերով սահմանված մարմնի կողմից և կարգով:

51. Ներքին աուդիտը խորհրդին և գործադիր մարմնին պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

52. Ֆինանսական հաստատությունը, Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետության մակարդակը վերստուգելու նպատակով հրավիրած արտաքին աուդիտի եզրակացության պատճենը հնգօրյա ժամկետում տրամադրում է Լիազոր մարմնին:

53. Ֆինանսական հաստատությունը, որն ունի դուստր կազմակերպություն, մասնաճյուղ և (կամ) ներկայացուցչություն, պատասխանատու է դրանց կողմից սույն կանոնակարգի դրույթների պատշաճ կիրառության համար: Այդ նպատակով ֆինանսական հաստատությունը պետք է ստանա և ուսումնասիրի իր դուստր կազմակերպություններում, մասնաճյուղերում և ներկայացուցչություններում ներքին և (կամ) արտաքին աուդիտի կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ստուգումների վերաբերյալ հաշվետվությունների պատճենները:

ԳԼՈՒԽ 12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՈՒՍՈՒՑՄԱՆ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

54. Որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը, այդ թվում՝ որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման քննությունն (այսուհետև՝ քննություն) անցկացվում է ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի և աշխատակիցների թեկնածուների և հավակնորդների համար:

55. Սույն կանոնակարգի իմաստով՝ թեկնածու են համարվում ֆինանսական հաստատության կողմից որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը ներկայացած այն անձինք, որոնց ֆինանսական հաստատությունը նշանակել է ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի կամ աշխատակցի պաշտոնին:

56. Սույն կանոնակարգի իմաստով՝ հավակնորդ են համարվում այն անձինք, որոնք անձնական նախաձեռնությամբ դիմում են՝ անցնելու որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում:

57. Մինչև սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելը ֆինանսական հաստատության ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի կամ աշխատակցի պաշտոնին նշանակված անձինք պետք է որակավորվեն սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում, իսկ սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի կամ աշխատակցի պաշտոնում նշանակված անձինք՝ նշանակման պահից եռամսյա ժամկետում:

58. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից որակավորված աուդիտորները, Համապատասխանության միջազգային ասոցիացիայի համապատասխանության դիպլոմ կամ հավաստագիր ունեցող անձինք, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից կազմակերպված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում համապատասխանության գործնական դասընթացը և որակավորման քննությունն անցած անձինք (հավակնորդները) ազատվում են որակավորման քննություն հանձնելու պարտականությունից:

59. Թեկնածուների (հավակնորդների) որակավորումը և մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:

60. Քննությանը թեկնածուների (հավակնորդների) մասնակցության համար Լիազոր մարմին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.
2) Լիազոր մարմնի կողմից որակավորման և մասնագիտական համապատասխանության քննության անցկացման համար սահմանված գումարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճեն.
3) անձնագրի պատճեն.
4) աշխատանքային գրքույկի պատճեն.
6) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն.
5) ինքնակենսագրություն:

61. Սույն կանոնակարգի 60-րդ կետով սահմանված փաստաթղթերի կեղծ կամ անարժանահավատ լինելու դեպքում Լիազոր մարմինը մերժում է դիմումը կամ անվավեր է ճանաչում որակավորման վկայականը:

62. Թեկնածուների (հավակնորդների) քննությունն անցկացվում է գրավոր (թեստային ձևով):

Գրավոր (թեստային) քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով: Քննության ընթացքին կարող են հետևել հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հանձնաժողովի համաձայնությամբ՝ Լիազոր մարմնի այլ աշխատակիցներ:

63. Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը կազմվում է նախապես հրապարակված թեմաների ցանկի հիման վրա: Թեմաների ցանկը և թեստերը հաստատում է Լիազոր մարմնի խորհուրդը:

64. Թեստերը վերանայվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

65. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի և աշխատակիցների քննության թեստերը կազմվում են՝ ստուգելու թեկնածուի (հավակնորդի) իմացությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային փաստաթղթերի և պրակտիկայի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների, ՓԼ/ԱՖ տիպաբանությունների, տվյալ ֆինանսական հաստատության գործունեության կարգավորման ու վերահսկողության վերաբերյալ օրենսդրության ոլորտներում: Թեստի միջոցով ստուգվում են նաև թեկնածուի (հավակնորդի) վերլուծական կարողությունները:

66. Մասնագիտական համապատասխանության ստուգման քննությանը ներկայացվող թեստում ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի համար պարունակվող հարցերի թիվը 120 է, իսկ աշխատակիցների համար՝ 100:

67. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար թեկնածուին (հավակնորդին) հատկացվում է միջին հաշվով 1.5 րոպե:

68. Թեստերի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է չորս պատասխան, որոնցից մեկն է ճիշտ: Թեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը, ինչպես նաև հարցին չպատասխանելը՝ զրո միավոր:

69. Թեկնածուներին (հավակնորդներին) թույլատրվում է մասնակցել թեստային քննությանը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում: Քննության ժամանակ (թենածուին) հավակնորդին, ինչպես նաև քննասենյակում գտնվող այլ անձանց արգելվում է օգտվել օրենսդրական ակտերից կամ այլ իրավական նյութերից, մասնագիտական գրականությունից, տեղեկատուներից, երկխոսության մեջ մտնել մյուսների հետ: Այդ պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում հավակնորդը զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, և նրա վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

70. Թեստերի հարցերի գնահատումը հանձնաժողովի կողմից կատարվում է հետևյալ կերպ՝

1) հավակնորդի կողմից միավորների առավելագույն թվի մինչև 70 տոկոսը հավաքելու դեպքում արձանագրում է բացասական եզրակացություն.
2) ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի կամ ղեկավարի պաշտոնին հավակնորդի կողմից միավորների առավելագույն թվի 70 և ավելի տոկոսը հավաքելու դեպքում հանձնաժողովն արձանագրում է դրական եզրակացություն, և նրան տրվում է որակավորման վկայական:

71. Թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է հանձնաժողովը:

72. Թեկնածուները (հավակնորդները) կարող են բողոքարկել անցկացված քննության արդյունքները՝ քննության անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմում ներկայացնելով Լիազոր մարմնի նախագահին: Նախագահի հանձնարարականի հիման վրա կարող է ստեղծվել վերանայման հանձնաժողով, որը կարող է վերանայել հանձնաժողովի եզրակացությունը:

73. Անցկացված քննության արդյունքներով և հանձնաժողովի դրական կարծիքի հիման վրա Լիազոր մարմնի նախագահի անհատական որոշմամբ, թեկնածուին (հավակնորդին) տրվում է որակավորման վկայական:

74. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի և աշխատակցի որակավորման վկայականները տրվում են նրանց տրամադրման պահից հաշված 3 տարի ժամկետով:

75. Որակավորման վկայականի կորստի դեպքում ներքին դիտարկումների մարմնի ղեկավարը կամ աշխատակիցները կարող են այդ մասին գրավոր հայտնել Լիազոր մարմնին՝ ներկայացնելով գրավոր դիմում Լիազոր մարմնի նախագահի անունով: Կորցրած վկայականը հանձնաժողովի կողմից համարվում է անվավեր, իսկ դրա փոխարեն դիմումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում տրվում է որակավորման նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշագրումով:

76. Տրված որակավորման վկայականների հաշվառման մատյանում գրառվում են վկայական ստացած անձանց անունը, ազգանունը, հասցեն, Լիազոր մարմնի նախագահի անհատական որոշման համարը և ամսաթիվը, հանձնաժողովի արձանագրության համարը և ամսաթիվը, որակավորման վկայականի համարը և տրման ամսաթիվը:

77. Քննությունն անցկացվում է թեկնածուի կամ հավակնորդի կողմից փաստաթղթերի փաթեթը ներկայացնելու պահից 15-օրյա ժամկետում:

78. Ֆինանսական հաստատությունը պետք է պարբերաբար ուսուցում կազմակերպի ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող բոլոր աշխատակիցների համար: Նոր աշխատակիցների ընդունման դեպքում ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ուսուցում պետք է կազմակերպվի առաջին երեք ամիսների ընթացքում:

79. Ֆինանսական հաստատության բոլոր աշխատակիցները պետք է իրազեկ լինեն ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրենց ներքին իրավական ակտերին:

80. Ֆինանսական հաստատությունը պետք է սահմանի և իրականացնի ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իր աշխատակիցների պարբերական ուսուցման ծրագրեր: Այդ ծրագրերը պետք է նախատեսեն ուսուցում խորհրդի անդամների, գործադիր մարմնի աշխատակիցների, ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների, հաճախորդների սպասարկման և աուդիտի գործառույթներ իրականացնող աշխատակիցների համար: Այդ աշխատակիցների համար ուսուցումը և վերապատրաստումը պետք է հնարավորություն տան հավաստիանալու, որ նրանք ունեն ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների ու ընթացակարգերի վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, մասնավորապես՝

1) բարձր և ցածր ռիսկի չափանիշների, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության առավել հաճախ հանդիպող հիմքերի և չափանիշների վերաբերյալ, այդ թվում՝ Լիազոր մարմնի ուղեցույցներով տրամադրվող կասկածելի գործարքների տիպաբանությունների վերաբերյալ.
2) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնակարգի, ներքին իրավական ակտերի դրույթների վերաբերյալ:

81. Ֆինանսական հաստատության կողմից իրականացվող ուսուցման ծրագրերը, դրանց վերաբերյալ բոլոր նյութերը, ինչպես նաև ուսուցման ծրագրերին մասնակցած անձանց անուններն ու ստորագրությունները պետք է առանձին հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 տարի:

ԳԼՈՒԽ 13. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

82. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 17-ի ««Բանկերում և վարկային կազմակերպություններում, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող այլ անձանց մոտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման մասին» կանոնակարգ 5-ը, «Կասկածելի գործառնության վերաբերյալ» տեղեկանքի ձևը, բանկային հաշվի բացման համար բանկի կողմից պահանջվող տեղեկությունների, հաճախորդների և պարտատերերի սպասարկման ընթացքում վարկային կազմակերպության կողմից պահանջվող տեղեկությունների օրինակելի ցանկերը հաստատելու մասին» թիվ 442-Ն որոշումը:

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշմամբ

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____ս,
«__» _____ ____ թ. _____
գործարար հարաբերության մեջ կամ միանգամյա գործարքում հանդես գալով որպես _____,
հայտարարում եմ, որ գործարար հարաբերության մեջ կամ միանգամյա գործարքում առկա է/առկա չէ իրական շահառու:

Առկայության դեպքում՝ իրական շահառու է _____-ը:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության կամ շահառուի ի հայտ գալու դեպքում տեղյակ պահել _____-ին:

«__» _____ ____ թ. _____
ստորագրություն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման և սահմանման կարգը» հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. սեպտեմբերի 9-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.10.08 թ. (ՀՀԳՏ N37 (311), 3.11.08):

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման և սահմանման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման և սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 245-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 սեպտեմբերի 2008 թ., N 270-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 270-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՄԱՆ

Կ Ա Ր Գ

1. Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա 5-ից 10-ն ընկած ժամանակահատվածում՝ հաշվարկման օրվան նախորդող 5 շաբաթների ընթացքում՝ Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության իրավաբանական և ֆիզիկական անձանցից Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված 90 օրից ավելի ժամկետայնության ավանդների և նրանց՝ Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով տրամադրված 90 օրից ավելի ժամկետայնության վարկերի տոկոսադրույքների և ծավալների վերաբերյալ տվյալների հիման վրա: Հաշվարկում արտարժութային միջոցները փոխարկվում են տվյալ ամսվա միջին ամսական փոխարժեքով: Բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Նախորդող շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ» ձև 17 շաբաթական հաշվետվությունները:

2. Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը հաշվարկվում է 90-ից ավելի օր ժամկետով Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի տոկոսադրույքները 365-օրյա ժամկետի համար

$$I_{\text{վերահաշվարկված}} = \left[\left(1 + \frac{i_t}{100} * \frac{t}{365}\right)^{\frac{365}{t}} - 1 \right] * 100$$

վերահաշվարկման (արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման սկզբունքով) և համապատասխան ծավալներով կշռման միջոցով,

որտեղ՝

$I_{\text{վերահաշվարկված}}$ -ը վերահաշվարկված տոկոսադրույքն է 365-օրյա ժամկետի համար,

t - ն՝ տրամադրված վարկերի կամ ներգրավված ավանդների ժամկետայնությունը,

i_t - ն՝ տրամադրված վարկերի կամ ներգրավված ավանդների անվանական տոկոսադրույքը t ժամկետայնության համար.

$$I_{\text{հաշվարկային}} = \frac{\sum_{j=1}^{n}(I_{\text{j,վերահաշվարկված}} * V_j)}{\sum_{j=1}^{n} V_j}$$

$I_{\text{հաշվարկային}}$ - ը բանկային տոկոսի հաշվարկային դրույքն է,
$I^j_{\text{, վերահաշվարկված}}$ - ը j-րդ գործարքի վերահաշվարկված տոկոսադրույքն է,
V_j - ն՝ j-րդ գործարքի ծավալը,
n - ը՝ հաշվարկում ընդգրկված գործարքների քանակը:

3. Բանկային տոկոսի հաշվարկային դրույքի հաշվարկում չեն ներառվում Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով տրամադրված այն վարկերը և ներգրավված ավանդները, որոնց 365-օրյա ժամկետի համար վերահաշվարկված տոկոսադրույքները շեղվում են հաշվարկման ժամանակահատվածի տվյալների հիման վրա 365-օրյա ժամկետի համար վերահաշվարկված տոկոսադրույքներով հաշվարկված՝ իրենց կշռված միջիններից 50% և ավելի չափով:

4. Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ որոշմամբ, որը կարող է ուժի մեջ մտնել ընդունման պահից՝ այդ որոշմամբ նախատեսված լինելու դեպքում: Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվում է տասնորդական նիշի ճշգրտությամբ:

5. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը սույն կարգով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսը հաշվարկելուց հետո պարզում է, որ Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխություն տեղի չի ունենում, ապա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույք սահմանելու վերաբերյալ որոշման նախագիծ չի ներկայացվում: Այս դեպքում գործում է Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի վերջին որոշմամբ հաստատված տոկոսադրույքն այնքան ժամանակ, մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում կկայացնի Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքը փոփոխելու վերաբերյալ:

6. Եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված է, որ դա ուժի մեջ է մտնում ընդունման պահից, ապա այդ որոշման ընդունման պահից տասնհինգ րոպեի ընթացքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն այդ որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության բանկային տոկոսի հաշվարկային դրույքի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին և վարկային կազմակերպություններին՝ ՍիԲիէյնեթ համակարգի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը տվյալ որոշումն անմիջապես հրապարակում է ինտերնետում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «Տնային էջում», և 4 օրվա ընթացքում՝ մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և ղեկավարվելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. սեպտեմբերի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.10.08 թ. (ՀՀԳՏ N36 (310), 22.10.08):

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 342-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցի 4.1 կետը լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «զ) սահմանված չէ օպերատորի պարտավորությունն ապահովել իր համակարգի սպասարկումը հայաստանյան մասնակցի բոլոր տարածքային ստորաբաժանումներում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
25 սեպտեմբերի 2008 թ., N 275-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2008 թվականի նոյեմբերի 17-ից շրջանառության մեջ դնել «Միջազգային ֆուտբոլի արքաները» հուշադրամների շարքից «էյսեբիո» արծաթե հուշադրամը:

2. 2008 թվականի դեկտեմբերի 15-ից շրջանառության մեջ դնել «Միջազգային ֆուտբոլի արքաները» հուշադրամների շարքից «Յաշին» արծաթե հուշադրամը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված հուշադրամների նկարագրությունը, որը հուշադրամների ուրվագծերի հետ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
9 հոկտեմբերի 2008 թ., N 284-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի
հոկտեմբերի 7-ի թիվ 284-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԷՅՍԵԲԻՈ» ԵՎ «ՅԱՇԻՆ» ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐԻ

1. «ԷՅՍԵԲԻՈ» և «ՅԱՇԻՆ» հուշադրամների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Միջազգային ֆուտբոլի արքաները» դրամագիտական ծրագրի շրջանակներում թողարկել է 100 դրամ անվանական արժեքով «էյսեբիո» և «Յաշին» արծաթե հուշադրամները:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.10.08 թ. (ՀՀԳՏ N37 (311), 3.11.08):

Հուշադրամների դիմերեսի վերևի կիսաշրջանում պատկերված է KINGS OF FOOTBALL մակագրությամբ եզրապատված արքայի թագ, որը պահպանվում է երկու առյուծների կողմից, իսկ ներքևի կիսաշրջանում՝ ֆուտբոլի գնդակ և հուշադրամի անվանական արժեքը՝ «100 ԴՐԱՄ»: Դիմերեսի եզրագծով տեղադրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունները: Անվանական արժեքի և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունների միջև Հայաստանի Հանրապետության զինանշանն է և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2008»:

«Էյսեբիո» հուշադրամի դարձերեսին Պորտուգալիայի ազգային դրոշի գույների ֆոնի վրա, որը ֆուտբոլի գնդակի հետ ստեղծում է գիսաստղի պատկեր, տեղադրված է էյսեբիոյի դիմանկարը: Դիմանկարի ներքևի մասում էյսեբիոյի ստորագրությունն է, իսկ վերևի մասում՝ «EUSEBIO» գրառումը:

«Յաշին» հուշադրամի դարձերեսին Խորհրդային Միության դրոշը խորհրդանշող կարմիր ֆոնի վրա, որը ֆուտբոլի գնդակի հետ ստեղծում է գիսաստղի պատկեր, տեղադրված է Լև Յաշինի դիմանկարը: Դիմանկարի ներքևի մասում Յաշինի ստորագրությունն է, իսկ վերևի մասում՝ «LEV YASHIN» գրառումը:

Հուշադրամները՝ թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված են կլոր կաշվե տուփերի մեջ:

Հուշադրամների ուրվագծերի հեղինակն է Ռոբերտ Կոտովիչը:

Հուշադրամները հատվել են Լեհաստանի դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը	
Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, $925^0 \pm 5^0$
Զանգվածը	$28,28 \pm 0,25$ գ
Տրամագիծը	$38,61 \pm 0,15$ մմ
Ձևը	կլոր
Որակը	պրուֆ
Ձևավորումը	դրոշմատպագրություն դարձերեսին
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	մինչև 200000 հատ

1.2) «ԷՅՍԵԲԻՈ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





1.3) «ՅԱՇԻՆ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 2-ի 53 կետը «վարկերի» բառից առաջ լրացնել «լոմբարդային, համակարգային» բառերով:

2) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 2-ի 53.1, 53.2 և 53.3 կետերը:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը չի տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից նպատակային ճանաչված միջոցների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից նպատակային ճանաչված միջոցների ներգրավման պայմանագրերում և (կամ) նպատակային միջոցների հաշվին նպատակային ծրագրերի ֆինանսավորման (տեղաբաշխման) պայմանագրերում սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տեղի են ունեցել փոփոխություններ (բացառությամբ՝ սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքի), կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով նպատակային ճանաչված ներգրավված միջոցները կամ դրանց մի մասը չեն ուղղվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված նպատակային միջոցների ներգրավման և (կամ) նպատակային միջոցների հաշվին նպատակային ծրագրերի ֆինանսավորման (տեղաբաշխման) պայմանագրերով նախատեսված ծրագրերի ֆինանսավորմանը (տեղաբաշխմանը), կամ այդ միջոցները կամ դրանց մի մասը ներգրավվել և (կամ) տեղաբաշխվել են տվյալ ծրագրերով նախատեսված պայմաններից զգալի շեղումներով:

1) Այն դեպքերում, երբ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից նպատակային ճանաչված և պահուստավորումից ազատված բանկերի կողմից ներգրավված և (կամ) տեղաբաշխված միջոցները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան պայմանագրով մի բանկից փոխանցվում են մեկ այլ բանկի, ապա ներգրավված միջոցները ծրագրի մնացած ժամանակահատվածի ընթացքում շարունակում են մնալ պարտադիր պահուստավորումից ազատված՝ պայմանով, որ նպատակային ճանաչված միջոցների ներգրավման և (կամ) նպատակային միջոցների հաշվին նպատակային ծրագրերի ֆինանսավորման (տեղաբաշխման) պայմաններում փոխանցման արդյունքում փոփոխություններ (բացառությամբ՝ պայմանագրի կողմի) տեղի չեն ունեցել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 հոկտեմբերի 2008 թ., N 285-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հոկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.10.08 թ. (ՀՀԳՏ N37 (311), 3.11.08):

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*Հունվար – սեպտեմբեր*	*2008թ. հունվար – սեպտեմբերի իրական ածի ինդեքսը 2007թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Հունվար – հոկտեմբեր*	*2008թ. հունվար – հոկտեմբերի իրական ածի ինդեքսը 2007թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	2606136.1	110.4	3010472.9	109.2
ՀՆԱ դեֆլյատոր *(%. ածողական)*	--	110.5	-	110.8
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. ածողական)* [7]	2323.6	106.8	2685.0	105.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	570232.2	103.4	639445.2	104.0
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	4753.2	106.2	5180.9	105.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	474331.4	104.2	576601.4	101.8
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	690058.7	107.5	793383.8	107.9
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	604295.4	112.1	685105.5	106.9
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	523014.8	114.5	589901.6	113.3
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	88672	109.6 [1]	89164 [2]	109.3 [1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1196.7	-	1196.2	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	75.1	-	75.0	-
Գործազրկության մակարդակը *(%)*	6.3	-	6.3	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2008	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.4	101.0	100.2	103.2
Փետրվար	101.1	102.0	100.6	101.3
Մարտ	101.4	99.6	101.0	90.9
Ապրիլ	101.1	102.3	127.5	95.2
Մայիս	101.3	102.1	103.6	92.3
Հունիս	99.5	100.4	100.1	76.9
Հուլիս	97.8	101.0	110.2	83.8
Օգոստոս	99.3	98.4	100.2	79.1
Սեպտեմբեր	100.5	99.0	99.8	88.2
Հոկտեմբեր	100.7	94.7	99.0	100.9
2008 թ. հունվար – հոկտեմբերը 2007 թ. հունվար – հոկտեմբերի համեմատությամբ	109.6	105.0	130.6	96.6

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2006*	*2007*	*2008*	*2008*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.5	2.4	2.4	2.4
Փետրվար	0.2	0.2	1.1	3.4
Մարտ	0.1	-0.6	1.4	4.8
Ապրիլ	0.3	0.1	1.1	6.0
Մայիս	2.4	2.1	1.3	7.4
Հունիս	-1.2	-0.3	-0.5	6.8
Հուլիս	-0.7	-3.2	-2.2	4.5
Օգոստոս	-0.9	-1.5	-0.7	3.7
Սեպտեմբեր	-0.3	0.7	0.5	4.2
Հոկտեմբեր	0.2	3.1	0.7	4.9
Նոյեմբեր	1.0	2.1		
Դեկտեմբեր	1.6	1.5		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.2	6.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	2.9	4.4		

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	*Նախորդ ամսվա նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**100.7**	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.6**	**0.86**
բանջարեղեն	111.7	0.6
միրգ	106.4	0.2
կենդանական և բուսական յուղեր	102.8	0.1
միս և մսամթերք	101.1	0.1
Ոչ պարենային ապրանքներ	**99.2**	**-0.13**
հագուստ և գործվածք	100.5	0.01
կոշկեղեն	100.8	0.01
Ծառայություններ	**99.8**	**-0.06**

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [1]

ժամանակաշրջան	*2006*	*2007*	*2008*
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.4	0.2	0.40
Փետրվար	-0.3	-0.1	0.83
Մարտ	0.0	-0.1	0.66
Ապրիլ	0.3	0.3	1.26
Մայիս	0.2	0.3	0.55
Հունիս	0.0	-0.2	0.30
Հուլիս	0.8	-0.2	0.02
Օգոստոս	-0.2	-0.2	0.06
Սեպտեմբեր	0.4	0.5	0.48
Հոկտեմբեր	0.2	0.8	0.10
Նոյեմբեր	0.2	0.8	
Դեկտեմբեր	0.0	0.3	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.90	1.97	2.91
Փետրվար	1.43	2.21	3.77
Մարտ	1.50	2.07	4.54
Ապրիլ	2.15	2.05	5.66
Մայիս	2.49	2.14	5.94
Հունիս	2.64	2.05	6.47
Հուլիս	4.01	1.03	6.75
Օգոստոս	3.73	1.18	6.97
Սեպտեմբեր	2.82	1.32	6.99
Հոկտեմբեր	2.80	1.94	6.21
Նոյեմբեր	2.64	2.45	
Դեկտեմբեր	2.09	2.70	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ 10 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)*
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**6.21**
Խոզի միս	0.70
Տավարի միս	0.13
Մակարոն	0.14
Բրինձ	0.11
Կարագ	0.42
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.92
Ծառայություններ բժշկական լաբորատորիաների (ռենտգեն նկար)	0.45
Ծառայություններ միջին բժշկական անձնակազմի և լաբորանտների	0.26
Բենզին	0.45
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.33


[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնացված կառավարման գրամական միավորներ և ավանդներ	կենտրոնացված կառավարության հաշիվներ	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2007									
Դեկտեմբեր [1]	0	4541	4541	93623	513	0	175	94311	**-89770**
2008									
Հունվար	0	4650	4650	111457	517	0	177	112151	**-107501**
Փետրվար	0	4266	4266	113865	519	0	177	114562	**-110295**
Մարտ	0	4113	4113	128159	520	0	94	128773	**-124659**
Ապրիլ	0	3934	3934	122435	518	2	92	123048	**-119113**
Մայիս	0	3769	3769	124631	516	19	92	125258	**-121489**
Հունիս	0	3592	3592	124166	512	375	91	125144	**-121552**
Հուլիս	0	3544	3544	113946	509	2247	91	116793	**-113248**
Օգոստոս	0	3543	3543	115687	513	1368	91	117659	**-114116**
Սեպտեմբեր	0	3301	3301	110511	510	774	212	112007	**-108706**
Հոկտեմբեր	0	3007	3007	113910	513	650	214	115287	**-112281**

[1] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Ամփոփում	*2008 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2008 թ. հունվար – սեպտեմբերը 2007 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2008 թ. հունվար – հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2008 թ. հունվար – հոկտեմբերը 2007 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	832.5	100.4	941.2	100.9
Ներմուծում *(ՍԻՖ)*	3126.7	143.0	3579.2	142.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2294.2	169.0	2638.0	167.7

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ 2007 - 2008 ԹԹ.

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2007 թվական					
	Հունվար – հոկտեմբեր			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	850278	105806	744472	1078218	129126	949092
ԱՄՆ	64207	18241	45966	76571	23764	52808
Ուկրաինա	11493	8303	3190	14646	10770	3876
Ղազախստան	12347	452	11894	16379	610	15769
Գերմանիա	10409	6728	3681	13210	7764	5446
Իսպանիա	6757	2245	4512	8671	2564	6107
Ֆրանսիա	7524	4129	3395	9659	4851	4808
ԱՄԱ	2364	11638	-9274	2812	13339	-10528
Չինաստան	273	10259	-9986	362	12062	-11700
Թուրքիա	1647	9166	-7519	2268	10338	-8070
Այլ երկրներ	78726	38682	40044	96683	45981	50702
Ընդամենը	1046024	215649	830375	1319479	261170	1058310

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2008 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	141441	13084	128358	1144346	100606	1043740
ԱՄՆ	4833	3065	1768	51453	27195	24259
Ուկրաինա	2843	1075	1767	27578	8828	18750
Ղազախստան	1970	184	1786	15347	818	14530
Գերմանիա	984	716	269	11372	5300	6072
Իսպանիա	466	295	171	10081	2426	7655
Ֆրանսիա	519	458	61	7920	3809	4111
ԱՄԱ	811	860	-49	8483	7634	848
Չինաստան	71	670	-599	516	6527	-6010
Թուրքիա	229	607	-378	2379	6158	-3779
Այլ երկրներ	7317	3090	4227	87027	29281	57745
Ընդամենը	161485	24104	137380	1366502	198581	1167921

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ[1]

2007	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	119.2	120.7	117.6	113.9	118.8	121.3	117.8	116.9	114.8	118.2	122.5	129.1
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	209.1	212.8	210.0	204.7	210.1	216.1	217.2	219.2	215.5	217.6	222.9	233.4
2008	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ [2]**	**Ս [2]**	**Հ [2]**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	129.2	128.6	125.0	124.1	125.8	125.3	121.9	123.9	128.9	133.2		
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	230.3	228.9	222.1	220.7	223.0	224.6	224.1	229.7	238.4	247.6		


[1] Հաշվարկված է ՀՀ 9 հիմնական գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների նկատմամբ՝ 1999-2003 թթ. կշիռներով:
[2] Ըստ ԿԲ գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2007	2008									
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	1659.2	1628.1	1621.7	1606.0	1595.2	1546.7	1579.6	1603.5	1612.8	1585.2	1489.2
Համախառն միջազգային պահուստներ	1659.2	1628.1	1621.7	1606.0	1595.2	1546.7	1579.6	1603.5	1612.8	1585.2	1489.2
Ոսկի	0.0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ - ում	9.7	9.8	7.2	7.5	19.8	18.2	14.6	14.5	14.1	14.0	5.8
